

12834

Սասնայի դուխր

891.99

Ժ - 16

Թիֆլիս
1895

2003

91.542-3

2-16

Համար 10 - 1000 7 000 000
Հրատարակված է

Հրատ. «Կովկ. գրավ.» Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ.

144

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹ

Դ Ի Ի Ց Ա Ջ Ն.

Հ ի լ ա ն ց

Յ. ՃԱՂԱՐԲԵԳԵԱՆ.

ԳԻՆՆ Ի 20 ԿՈՊԵԿ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տարածման Մ. Շարածե և ընկ. Նիկ. 21.

Tun. M. Шарадзе и К^о Ник. 21

1895

- ողբերգութիւն 5 դործող, թարգմ.
Գ. Բարխուդարեան. — 60
23. — Վարդարան — ի պէտս վարժու-
թեան տեւահասակ մանկանց: Աշ-
խատասիրութիւն երկց երկու եղ-
բարց Գ. և Ս. Սկանդարեանց և
ընկերի նոցա պ. Ղահր. Մելի-
քեանց, թարգմանութիւն Ը. մեծի
մասին ՚ի պարսկերէնէ — 20
24. Խատիւիանց. Գաբր—սէր, հայ երեխանցը
ընծայ. հատր ա — 40

891.542-3

2-16

u.w

Հրատարակ. «Կովկ. գրաւաճառ.» Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ.

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹ

Դ Ի Ի Յ Ա Ջ Ն.

Հ ի լ ս ե ց

Յ. ՃԱՂԱՐՔԷԳԵԱՆ.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձէ եւ ընկ. || Тис. М. Шарадзе и К°.

1895

2921

Дозволено цензурою, Тифлисъ, 27 Марта,
1895 г.

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԹ

Ա. Ռ. Ի. Թ. Ա. Զ. Ե. Ի. Մ. Հ. Ե. Բ.

Ընչպէս արծիւն օդի մէջ իշխում, ինչ-
պէս արեւը պայծառ աստղերի մէջ թագաւո-
րում, այդպէս էր Մհերը բոլոր պետերի, իշ-
խանների մէջ: Կայծակի թուրը իւր ձեռքին
բռնած՝ ընկճում, խորտակում էր ամեն չար
բան, պահում, պաշտպանում՝ ինչ որ բարի
էր: Նստում էր նա իւր Սասուն քաղաքում.
այդտեղից սարսափ օտարին ազդում: Ոչ ոք
չէր կարող նրա դէմ կանգնել. ոչ միայն մար-
դիկ, այլ դէ և վիշապ, գազան կատաղի նրա
հարուածին չէին դիմանալ:

Ինչպէս երկնքից կայծակ է թռչում, ջրն-
ջում, կործանում՝ ինչի որ դիպչում, այդպէս
էր Մհերը Սասունից իջնում և իւր թշնա-
մուն հող-մոխիր դարձնում:

Այրերի միջին ապրող դեերը նրա անու-
նիցն էին սարսափում. գահերի վրայ՝ նստած
պետերը «Մհեր» լսելիս՝ դողում, սարսուռում:

Դեռ նա փոքր էր, տասը տարեկան. դէպ Սասուն տանող լեռնուղու վրայ առիւծ երեւաց, ահռելի վիշապ: Ոչ ոք Սասունից չէր կարող դուրս գալ. ոչ մի մարդ Սասուն չէր կարող գնալ: Վիշապն ամեհի ամենքին բռնում է, հուպ տալիս, լափում:

Եւ Սասունի մէջ թանգուլթիւն ընկաւ. հացը կտրուեց. ինչպէս մանգաղը արտն է հնձում, այդպէս էր սովը մարդկանց կոտորում:

Մհերը մի օր իւր հօր մօտ եկաւ և այսպէս խօսեց.— Հայրիկ, ինչո՞ւ է հացը կտրուել. ինչո՞ւ սասունցիք այսպէս փակուել են իրանց քաղաքում: Ինչո՞ւ մեր զրսի գիւղ-քաղաքներից ցորեն չեն բերում:

«Ո՛րդի, վիշապ է ճամբին լոյս ընկել. ով անց է կենում՝ բռնում է լափում»:

— Հայրիկ, հեռուից է մարդկանց վնասում, թէ՛ մօտենալիս է բռնում, ուտում:

«Հեռուից չէ կարող մարդկանց վնասել, ով մօտենում է, նրան է ուտում»:

— Որ այդպէս է, հայր, առաւօտը վաղ ես դուրս կգնամ, կռուեմ նրա հետ. տեսնեմ՝ ի՞նչպէս է նա ինձ վնասում:

«Որդեակ, ոչ մի նեւո ֆրան չի ազդում, զուր է գնալդ. նա քեզ էլ կուտի»:

Մհերը հօրը ականջ չդրեց. առաւօտը վաղ տանից դուրս եկաւ, առիւծին գնաց:

Քաղցած էր վիշապը. մի քանի օր էր, որ այն տեղերքով մարդ չէր անց կացել: Կատաղած էր նա. աչքեր կարմրել, արնով են կալուել: Ոռնում է, գոռում, սարսափ տալով: Նրա ահիցը մեծ անտառի մէջ էլ ձայն չէ լսում. ո՛չ մի շնչաւոր էլ չէ երեւում: Թռչունը քաշուել, իւր բոյնն է մտել. գազանը փախել, իւր որջում պահուել:

Վիշապը տեսաւ՝ ահա հեռուից հաստատուն քայլով առաջ է գալիս մատղահաս տղայ: Երբ որ մատղահաս տղան մօտեցաւ կատաղած գազանին, սա մի պինդ գոռաց, ահռելի ձայնով թնդաց, որոտաց. տեղից վեր թռաւ, նրա վրայ ընկաւ:

Իրար բռնեցին. Մհերն ու վիշապ իրար բռնեցին և քաշքշեցին: Վիշապի գլխից Մհերը բռնեց, կատաղի թափով որ գետին դարկեց, գետինը պատռուեց, նա մէջը խրուեց. ապա վրա հասաւ, ծնօտից բռնեց, ճղեց ու քաշեց մի կողմ շարժեց:

Եւ այդ օրուանից անունը մնաց Առիւծածակ Մհեր:

Դ Ա Ի Ի Թ

Մհերը ծերացաւ։ Ամեն կողմով գոհ էր, երջանիկ, բայց մի ցաւ ունէր. այդ այն էր, որ ժառանգ չունէր.— ահա մեռնելու ժամանակս է, մտածում էր նա, «իմ ժառանգն ո՞վ է. ո՞վ պէտք է ինձնից յետոյ տէրութիւն անէ իմ ազգին եւ երկրին»։

Երկնքից հրեշտակ իջաւ, Մհերին ասաց.— Մհեր, եթէ քեզ զաւակ լինի, դու էլ կրմեռնես, քո կիներն էլ։

Ասաց. «Մենք որ կանք, մեռնելու ենք, բայց որ մեզ տղայ լինի, մեր անունը չի կորչիլ, մենք էլ կըյիշուինք»։

Տարին լրացաւ, Մհերը մի որդի ունեցաւ. անունը դրին Դաւիթ։ Մհերը կտակ արաւ, ասաց.— Իմ տղին Մսրը կրտանէք, Մսրամելիքի մօրը՝ Իսլիմ խանումին կրտաք. նա ծիծ կրտայ, կըպահի։ Երբ որ ծծից կըկտրուի, այն ժամանակ, եղբայր Ջէսով Յովան, դու կըբերես, հայրութիւն կանես. նրա մեղքն ու վարձը քո վի-

զը. քանի կարող ես, լաւ պահիր, որ Սասնու ճրագը չանցնի:

Կտակ արաւ, պըծաւ, նոյն օրը մեռաւ: Մեռաւ եւ կիներ:

Դ Ա Ի Ի Թ Ը Մ Ս Ր Ո Ի Մ.

Չէնով-Յովանը ելաւ, Դաւթին վերցրեց, Մսրը քաղաքը տարաւ, Իսլիմ-խանումին յանձնեց, ինքը յետ դարձաւ:

Իսլիմ-խանումը Դաւթին ծիծ պիտի տար. երեք օր, երեք գիշեր անցաւ, Դաւիթը բան չկերաւ, նրա ծիծը չծծեց:

Մսրամելիքը նիզակ խաղալուց եկաւ. մայրը կանգնեց, նրան ասաց. — Երեք օր, երեք գիշեր կայ՝ այս տղան իմ ծիծը չի ուտում: Քաղցած պիտի մեռնի, մենք ամօթով պիտի մնանք: Այժմ ի՞նչ անենք, ի՞նչպէս այս տղին պահենք:

Մսրամելիքն ասաց. «Մայրիկ, այդ ազգը հաստակող ազգ է, մեր գլխին ցաւ պիտի լինի. բայց ի՞նչ անենք, ընկել ենք, պիտի տանենք, էլ ճար չկայ: Դրա հայրը մեծ հարըստութիւն ունի, մարդ ուղարկիր, մի բեռը մեղր, մի բեռը կարագ բերել տուր, իւզ ու մեղր չի-

նիր, կտաս՝ տղան կուտի, մենք էլ պարգերես հայի փորձանքից կալըրծենք»:

Մայրն ասաց. — Ո՛րդի, ի՞նչ ցաւ, ի՞նչ փորձանք, — սա քեզ եղբայր պիտի լինի:

Ասաց. — Դա ինձ եղբայր չի լինիլ, ինչ վնաս որ ինձ պատահի, դրանից պիտի լինի:

* * *

Իսլիմ խանումը մարդ ուղարկեց Սասուն, մէկ բեռը մեղր, մէկ բեռը կարագ բերաւ: Մեղրը ու կարագով Դաւթին կերակրեց երեք տարի: Երեք տարեկան որ եղաւ, Դաւիթը տանից դուրս եկաւ: Ամեն օր տանից դուրս էր գալիս, ութ, ինն, տասը տարեկան որքան տղայ էր տեսնում, առնում էր հետը, գնում էր նրանց հետ խաղալու:

Մի անգամ էլ գնացին վէզ խաղալու: Ընկերները մեծ մեծ տղերք էին, տասն տասներկու տարեկան. Դաւիթը փոքր էր, երեք տարեկան: Վէզի վրայ անհամաձայնութիւն ընկաւ մէջները, կռուեցին: Որի թեւն ընկաւ Դաւթի ձեռքը, թեւը թռաւ. որի ոտքն ընկաւ՝ ոտքը կոտրուեց: Երեք տղի թեւեր թռան, երեք տղի ոտքեր կոտրուեցան:

Դրանք տուն գնացին, իրանց ծնողներին

ասացին.—Մարամեղիքի տանը մի որբ տղայ կայ.
նա մեր ձեռք ու ոտքը ջարդեց:

Ծնողները գնացին, Մարամեղիքին գանգատ
արին: Մեղիքը շատ բարկացաւ, վեր կացաւ,
Դաւթին բռնեց, պիտի սպանէր: Մայրը չթո-
ղեց, ասաց.— երեխայ է, խեղքը բան չի կտրում:

Այդ օրն այդպէս անցաւ:

Միւս օրն Մարամեղիքը մօրն ասաց.— Մի
թողնիր գնայ, երեխաների հետ խաղայ:

Մայրն առաւօտը վեր կացաւ, Դաւթին
քնած թողեց, տան դուռը վրան կողպեց, գը-
նաց: Քիչ յետոյ Դաւիթը դարձնեց, տեսաւ
դուռը կողպած է: Ձեռքը տուաւ, դուռը կրքն-
կահան արաւ: Դուրս եկաւ, կանչեց ընկերնե-
րին, ժողովեց, պարտէզ տարաւ: Ի՞նչ անի Դա-
ւիթը, որ լաւ լինի. մի բարգի ծառ բռնեց, կը-
ռացրեց, ծայրը գետնին կպցրեց. կանչեց ընկեր-
ներին, ասաց.— «Տղերք, եկէք ծառը հեծնենք:

Տղերքը հաւաքուեցան, ուրախ-ուրախ ծա-
ռը հեծան: Դաւիթն էր, այնտեղից ծառի ծայ-
րը բաց թողեց. ծառը կանգնեց, հեծեալներին
այս ու այն կողմ չպրտեց: Երեք հոգի մեռան.
մնացածներից որի գլուխը կտրուեց, որի մէջ-
քը, որի ոտը, ամենքը վիրաւորուեցան: Եկան
հաւաքուեցին, վիրաւորներին ծնողների մօտ,
մեռածներին մզկիթի դուռը տարին:

Իրիկուն մոլլէն եկաւ, դիակները տեսաւ,
հարցրեց— ինչից մեռան սրանք:

Պատասխանեցին.— «Մարամեղիքի տանը մի
որբ տղայ կայ. այս երկրորդ անգամն է, որ
խաղալիս մեր երեխաներին կոտորում է»:

Մոլլէն թուղթ գրեց Մեղիքին.— կամ այդ
տղային սպանիր, կորցրու, կամ մենք վեր կե-
նանք, մեր տները աւերենք, գնանք:

Մարամեղիքը տուն եկաւ, թուղթը կար-
դաց.— Երեք իշխան մարդու որդի է սպանել
այդ որբը, կամ դրան սպանիր, կորցրու, կամ
մենք վեր կենանք, մեր տներն աւերենք, գը-
նանք:

Մեղիքը թուրը քաշեց, որ Դաւթին սպա-
նի. «Պիտի սպանեմ, իմ հացն ու ջուրը կըտ-
րեց, մի որբ տղի համար մէկ քաղաք չեմ ա-
ւերիլ:

Մայրը մէջ ընկաւ, ընդդիմացաւ. «Չպէտք
է սպանես:

— Անկարելի է, պիտի սպանեմ:

Մայրն ասաց. «Խեղքը բան չի կտրում,
երեխայ է, դրան սպանելը մեղք է»:

Մարամեղիքն ասաց.— Երեխայ չէ, խեղքը
հասնում է, բայց հաստակող է, գիտմամբ է
անում:

Ասաց. «Ո՛րդի, որ այդպէս է, արի փորձենք:

Ասաց.—Ի՞նչպէս պիտի փորձենք:

Մայրն ասաց. «Առաւօտը մէկ սինի կրակ, մէկ սինի ոսկի կը բերեմ, Դաւթի առջեւը կը դնեմ. թէ Դաւիթը ձեռքը դէպի ոսկին տա՜րաւ, ուրեմն խելքով է, դիտմամբ է սպանել. իսկ թէ տարաւ դէպի կրակը, ուրեմն երեխայ է, խելքը բան չի կտրում»:

Գիշերն անցաւ. լոյսը բացուեցաւ: Մէկ սինի կրակ, մէկ սինի ոսկի բերին դրին Դաւթի առջեւ: Ձեռը մեկնեց Դաւիթը, պիտի տանէր դէպի ոսկին: Աստծու հրամանով երկնքից հրեշտակ իջաւ, Դաւթի ձեռը շուռ տուաւ, դէպի կրակը տարաւ: Կրակ կպաւ մատին, մատն այրուեց. տուաւ լեզուին, լեզուն էլ այրուեց. որ լեզուն այրուեց, քիչ լալ դարձաւ: Անունը մ'նաց Թլոր-Դաւիթ:

Մայրն ասաց.—Ո՛րդի, տեսա՛ր որ խելքը բան չի կտրում:

Մեղին ասաց.—Ապա ի՞նչ անենք:

Ասաց.—Ի՞նչ պիտի անես. երբ որ գնում ես հոլ խաղալու, սրան էլ հետդ տար, քո եղբայրն է, տար, այնտեղ խաղ անի, աչքդ էլ վրան պահիր:

Ասաց. «Մայրիկ, ինձ հետ կը տանեմ, բայց հաստակող ազգից է, վախենում եմ, մի փորձանք բերի մեր գլուխը»:

Մարմեղիքը մօր խօսքը գետնովը չըտուաւ, առաւ Դաւթին ու գնաց: Եկան քաջերն ու պահաւանները, իրանց տեղերը բռնեցին: Մեղիքը Դաւթին դաշտի մէջ ջուկ տեղ նստեցրեց: Խաղը որ սկսեցին, Դաւիթը վեր կացաւ, գնաց հոլտուն մտաւ, այնտեղ նստեց: Մարմեղիքն եկաւ, շատ խնդրեց աղաչեց, որ այնտեղից դուրս գայ, Դաւիթը դուրս չեկաւ: Նա բարկացաւ.—Երեխայ տեղովը մեզ ընկեր է դառել. գնամ այնտեղից հոլը զարկեմ, որ դիպչի, միանգամից սպանի:

Գնաց եւ հոլը զարկեց: Դաւիթը ձեռը տուաւ, հոլը յետ դարձրեց. հոլը դիպաւ, շատ ձիաւորներ սպանեց: Այդ օրուայ ուրախութիւնը սգի փոխուեց:

* * *

Մարմեղիքը Դաւթին առաւ, տուն եկաւ. «Մայրիկ, ասաց. դու ինձ իմ ազգի մէջ սեւերես արիր: Այդ աղային այժմ պիտի սպանեմ»:

Մայրն ասաց.—Ո՛րդի, որ սպանում ես, գոնէ դու մի սպանիր, որ մեղքը վզիդ չընկնի: Երկու քաջերի հետ իւր հայրենական տունն ու դարկիր: Մուրադ չային որ կը հասնեն, Բաթ-

մանայ կամրջի վրայ քաջերը թող նրա գլուխը կտրեն, գետը գձեն:

Քաջերն առան Դաւթին, գնացին: Դաւիթըն էլ նրանց ականջ չի դնում. լոր է տեսնում՝ բռնում է, նապաստակ է տեսնում՝ սպանում է: Քաջերն ուղիղ ճանապարհովն էին գրնում, Դաւիթն ճանապարհից դուրս՝ խաղալով, վազվզելով:

Գնացին, գնացին, Մուրադ-չային հասան: Բաթմանայ կամրջի վրայ քաջերը կանգնեցին: Դաւիթը յետեւից եկաւ, ասաց.— Խնչում էք կանգնել:

Ասացին. «Գլխիդ-արեւիդ մատաղ, Դաւիթ, վախենում ենք, այստեղ քեզ մի փորձանք կը պատահի. եկ առաջ քեզ անցկացնենք»:

Ասաց.— 2է, մի վախենար, գնացէք, ես ձեր յետեւից կըգամ:

Նրանք ասացին. «2է, մեզնից մէկն անցնի, միւսը յետ մնայ, մէջտեղից դու եկ:

Ասաց.— Որ այդպէս է, թող ձեր խօսքը լինի:

Յէնց որ Դաւիթը կամրջի կէսն անցաւ, առջեւի մարդը յետ դարձաւ, յետեւինն էլ վրայ հասաւ. Դաւթին բռնեցին, որ սպանեն, գետը գձեն: Դաւիթը մէկ ձեռը տարաւ, մէկ մարդուն բռնեց, մէկն էլ մեկնեց՝ միւսին բռ-

նեց. կամրջի վրայ դրեց, ջիբից դանակը հանեց, որ սպանի:

Մէկն ասաց.— Դաւիթ, ես որ կամ, քո հօր հացն եմ կերել, քո հօր սփռոցի վրայ եմ մեծացել:

Միւսն ասաց.— Մենք մեզք չունենք, Դաւիթ. Մսրամովըք մեր տէրն է. նա հրամայեց, թէ Դաւթին տարէք, սպանեցէք, գետը գձեցէք:

Դաւիթը խղճաց նրանց վրայ, բաց թողեց: Նրանք մի շուն սպանեցին, արիւնը Մսրամովըքին տարին, ասացին.— «Դաւթին սպանեցինք, այս էլ նրա արիւնը»: Մսրամովըքն ուրախացաւ, առաւ արիւնը, խմեց, ասաց.— Սա պիտի իմ գլխին ցաւ դառնար:

ԴԱՒԻԹԸ ՀՈՎԻԻ.

Դաւիթը Մասուն եկաւ: 2էնով-Յովանը ուրախացաւ, գլուխն համբուրեց, փառք տուաւ Աստծուն, փառք անմահ թագաւորին. «Մեր տղան եկաւ, իւր հօր տեղը կըբռնի»: Բերաւ պողպատէ սուր ¹⁾ կարել տուաւ, պողպատէ կռու ²⁾ շինել տուաւ, Դաւթին գառնարած արաւ: Դա-

¹⁾ Կօշիկ:

²⁾ Յուսպ:

ւիթը պողպատէ սողերն հագաւ, պողպատէ կո-
ռը ձեռքն առաւ, գառներն առջեւ արեց, դաշ-
տը տարաւ: Դառները թողեց դաշտին մէջ:
Դաշտի մէջ այս ու այն կողմն ընկաւ, որքան
աղուէս, նապաստակ, գայլ, տեսակ-տեսակ ջա-
նաւարներ կային՝ քչեց, գառների մէջ արաւ,
իրիկունը քաղաք բերաւ: Քաղաքացիք որ տե-
սան՝ վախեցան. դռները փակեցին, դուրս չե-
կան: Դաւիթը գլուխը գետնին դրաւ, քաղա-
քից դուրս՝ հանդի մէջ քնեց:

Առաւօտը Ձէնով-Յովանը Դաւթի մօտ գը-
նաց. նայեց, տեսաւ, այնքան ման է եկել սա-
րերը, պողպատէ սողը մաշուել է, պողպատէ
կոռը կտրտուել է: Ասաց. — Դաւիթ, լինչպէս ես:

Ասաց. «Հօրեղբայր, այն սեւ ուլերն օրհ-
նած են, այն գորշագոյն ուլերն անիծած են.
Նրանք ինձ շատ են չարչարում»:

Հօրեղբայրն ասաց. — Գորշագոյն ուլերի ե-
տեւից մի՛ գնար, նրանք անիծած են, որոնք
մնում են՝ այն բեր:

Քիչ անցաւ, հօրեղբայրը Դաւթին՝ նախ-
որդ արաւ: Դաւիթը նախիրը քչեց, սարը գնաց:
Այս անգամ մեծ մեծ գաղաններ կային՝ առիւծ,
վագր, արջ, գայլ, բերաւ, նախիրի հետ խառնեց,
առջեւն արեց, իրիկունը քաղաք բերաւ:

Յովանը նայեց, տեսաւ՝ նախիրը գալիս է

հեռուից, բայց այնքան տաւար չկայ, որքան
գայլ, արջ, առիւծ ու վագր: Մոռնետիկն կան-
չեց, ասաց. — Կանչիր, թող ամեն մարդ իւր
դռներն ու երդիկները պնդի, քանի որ տաւա-
րը չի եկել: Տաւարի հետ առիւծներ, վագրեր,
գայլեր ու արջեր են գալիս, ով որ տեսնի, սիր-
տը կը պատռուի, կմեռնի: Թող դռներն ու
երդիկները կողպեն, մինչեւ մութը կալտի,
գաղանները սարը կը աշուին ու քաղաքացիք ի-
րանց տաւարը կտանեն, կգոմեն:

Քաղաքացիք դռներ, երդիկներ պնդեցին,
ոչ որ դուրս չեկաւ: Դաւիթ եկաւ, նախիրը
բերաւ. քաղաքը գաղաններով լցուեցաւ: Կան-
չեց Դաւիթն, ասաց:

«Բաց արէք ձեր դռներ, բաց արէք,
«Ում մէկն էր՝ երկու եմ արել,
«Ում երկուսն էր՝ չինել եմ ութ,
«Ում տասն էր՝ արել եմ քսան,
«Ում քսանն էր՝ քառասուն,
«Ում քառասուն էր՝ արել եմ յիսուն,
«Ում յիսուն էր՝ արել եմ հարիւր:

Գուռը ոչ որ բաց չարեց:

Դաւիթը կանչեց. — Օրհնեալ բարերար Աս-
տուած, խնդրում եմ՝ հրաման անես, որը սուրբ
է՝ այստեղ մնայ, որը սուրբ չէ, իւր տեղը
գառնայ:

Դադանները ջոկուեցան, գնացին, քաղա-
վարացիք դուրս եկան, իրանց տաւարը տարին:

*
* *

Առաւօտը Դաւիթը վեր կացաւ, նախիրն
առաւ, սարը գնաց: Մէկ էլ տեսաւ, որ մի
ուրիշ գիւղից էլ նախիր եկաւ այդտեղ: Գնաց
այն նախիրը քշեց, բերաւ, իւր տաւարի հետ
խառնեց: Նախորդին եկաւ, ասաց. — Դաւիթ,
այդ տաւարն իմն էր, ինչո՞ւ քո նախրի հետ
խառնեցիր:

Ասաց. — Զէ, այդ իմ երեկուայ նախրիցն
է այստեղ մնացել:

Ասաց. — Զէ, Դաւիթ ջան, իմ տաւարն է,
քոնը չէ:

Դաւիթը սիրեց նրան. եղբայրացան:

Նա ասաց. — Դաւիթ, դու քեզ համար քը-
նիր, ես տաւարը կըսւահեմ, իրիկունը քո ա-
ռաջը կանեմ, կըտանես:

Մի հով տեղ չինեց, Դաւիթը մէջը մտաւ,
քնեց:

Եւ այդ օրը ճիշտ ժամանակին Դաւիթը
տուն եկաւ. առաջ կամ չուտ էր գալիս, կամ
ուշ: Ուրախացաւ Զէնով-Յովանը, ասաց.

— Ո՛րդի, ահա միշտ այդպէս աչքաբաց ե-
կիր, ժամանակին գնա՛ ու արի:

Դաւիթն ասաց. «Տօրեղբայր, այդ իմ հորհ-
քը չէ: Ես մի եղբայր եմ բռնել, որ իմ հոր-
թերը պէտք է պահի, ես էլ իրան պիտի պահ-
պանեմ:

*
* *

Մի օր Դաւիթի ընկերն ուշացաւ. Դաւիթը
չատ նեղացաւ: Դու մի ասիր, դրանց գիւղումը
ցասման ժամ է, պատարագ է, տղան այդ պատ-
ճառով է ուշացել: Որ եկաւ, Դաւիթն ասաց.

«Այսօր դու իմ ձեռքից լինչպէս պիտի ա-
ղատուիս»:

Տղան ասաց. — Դաւիթ, քո ահից այնտեղ
չմնացի, ցասման ճաշից մի գդալ էլ չկերայ.
հորթերը քշեցի ու եկայ: Բայց լինչ անեմ, էլի
ուշացել եմ:

Դաւիթն էր, խղճաց ընկերին, ասաց. «Դու
այդտեղ նստիր, ես գնամ, քո բաժին ճաշը բե-
րեմ:

Դադանակն ուսին դրաւ, գնաց: Գնաց տե-
սաւ, որ հարիսէքը հանել, կալումն են դրել.
երէցներն էլ եկել, օրհնում են: Դաւիթը դա-
դանակը մի չորս կանթանոց լիքը պղնձի կան-

Թերը գցեց, ուսեց ու յետ դարձաւ։ Զարմացան ամենքը, որ այնտեղ էին. մէկը կանչեց։
— Դա մեր պղինձը տարաւ է։

Երէցն ասաց. «Ի սէր Աստծու, ձայն մի հանիր։ Դա Սասնու գծերիցն է. յետ կգայ, ամենքիս ջարդ ու փշուր կանէ, թող տանի, իւր գլուխն ուտի»։

Դաւիթը հարիսով լիքը պղինձն ուսին՝ ընկերի մօտ է գալիս։ Եկաւ, տեսաւ ընկերը նըստել, լաց է լինում։

Դաւիթն ասաց. — Յէյ, հէյ, գիտեմ ինչու ես լաց լինում. ճաշդ բերել եմ, բայց աղ ու իւղ չեմ բերել։ Վնաս չունի, հիմի ճաշդ կեր, իրուկունն էլ աղն ու իւղը կուտես։

Տղան ասաց. «Դաւիթ, աղն ու իւղն ինչ եմ անում. քառասուն դեւ եկան, հորթերն առան, քչեցին, գնացին»։

Դաւիթն ասաց. — Դու այդտեղ կաց, այդ մնացած հորթերին մտիկ արա, ես գնամ միւսները բերեմ։

* * *

Եւ հորթերի ետեւն ընկաւ, գնաց։ Հետքը բռնած գնաց, մի այրի դռան առաջ կանգնեց։ Հատկացաւ, որ այդտեղ են բերուած հորթերը։

Դաւիթն այդտեղ ահարկու ձայնով գոռաց։ Սարսափը գեւերին պատեց։ Դեւերի մեծը որ յսեց, ասաց. — Այս առիւծածեւ Մհերի տղան է. վեր կացէք, նրան յարգանք ու պատիւ տուեցէք, լաւ ծառայեցէք, թէ չէ մեզ ամենիս կկոտորի։

Մէկ մէկ դուրս եկան. Դաւիթը մէկ մէկ դագանակ զարկեց, ամենքի գլուխը գնաց։ Այդ քառասունի ականջները կտրեց, մի քարի տակ պահեց։ Յետոյ դագանակով այրի դուռը կրընկահան արաւ, ներս մտաւ։ Տեսաւ մի տեղ ոսկի է պիղած, մի տեղ՝ արծաթ։ Այն օրից, որ Մհերը մեռել է, այդ դեւերը աշխարհն անտէր են դտել, աւերել, թալանել են ու բերել, այրը լցրել։ Մի դուռ էլ բաց արեց Դաւիթը, մի ձիու քուռակ տեսաւ։ Ինքն իրան խօսեց ու ասաց. — Չէնով-Յովան, այս գանձն ու հարըստութիւնը քեզ, այս անասունն ինձ լինի, տալիս ես՝ տուր, չես տալիս՝ քեզ էլ դրանց օրին կհասցնեմ։

Ապա ինքն իրան պատասխանեց. — Ո՛րդի, գանձն ու հարստութիւնն էլ քեզ, անասունն էլ, ես ի՞նչ եմ անում։

Դարձաւ տեսաւ, որ օճախի վրայ քառասուն կանթանոց մի ահագին պղինձ գրած, քառասուն հորթ էլ մէջը։ Դագանակը կանթերի մէջ մտցրեց, պղինձը վերցրեց. ջուրը դա-

տարկեց. հորթերի ոտքերն ու կաշիքն էլ մէջըն ածեց, չալակեց ու գնաց գիւղը: Տեսաւ՝ հացկերոյթը վերջացել է, քահանայքը հացը օրհնում են:

Ասաց.— Սպասեցէք, բան եմ ասում:

Կաշիքը հանեց, գետնին թափեց: Եկան գիւղացիքը. ամեն մէկը իւր տաւարի կաշին ճանաչեց:

Ասաց.— Այդ պղինձն էլ տարէք. ծախեցէք, տաւարի մսի տեղ ձեր մէջ բաժանեցէք: Եթէ իմ եղբօր վարձը մի կորեկի չափ կտրէք, կգամ, ձեր գիւղը կաւերեմ:

Ասացին.— Դաւիթ, ձեռք վեր առ մեզնից, թէ Աստուած կսիրես. մենք քո եղբօր վարձը չենք կտրիլ:

Դարձաւ, ընկերի մօտ եկաւ: Տեսաւ, նա դեռ լաց է լինում: Ասաց.— Եղբայր, մինչեւ երբ պէտք է լաց լինես:

Ասաց.— Ի՞նչ անեմ. իմ նախրից քառասուն կով են տարել. ես լաց չլինեմ, հասկա ու լաց լինի:

Դաւիթն ասաց.— Տարել եմ, կաշիքն ու մսի գինը տէրէրին եմ տուել. պատուիրել եմ, որ քո վարձից մի կորեկի չափ էլ չկտրեն, թէ չէ՝ իրանց գիւղը կաւերեմ:

Ասաց.— Դէ վեր կաց, իմ տաւարը ջոկիր, ես գնում եմ:

Ասաց.— Դեռ կէս օր է, ուր ես գնում:

Ասաց.— Զէ, ես գնում եմ:

* * *

Եկաւ, Զէնով-Յովանին ասաց.— Զէնով-Յովան, վեր կաց, քսան ջորի առ, գնանք այնքան հարստութիւն բերենք, որ դու էլ ուտես, քո եօթը պորտն էլ:

Առան ջորիքն ու գնացին: Գնացին, մօտեցան այրին: Զէնով-Յովանը տեսաւ, որ դեւերը թափուած այրի դռան առաջ, այնպէս են ինչպէս մի մի բլուր: Նա վախեցաւ, ջորու գլուխը դարձրեց ու փախաւ:

Դաւիթն ասաց.— Տեսաւ, ես ողջ ողջ դեւերից չվախեցայ, դու մեռելներից ի՞նչ ես փախչում:

Բայց Զէնով-Յովանը մի գլուխ փախչում է:

Դաւիթը կանչեց.— Նօրեղբայր, թէ չես հաւատում, յետ դարձիր, այդ քարը բարձրացրու ու նայիր, ամենքի աւանջները այդտեղ եմ թափել:

Յովանն այդ որ տեսաւ, հանգստացաւ, դարձաւ, ջորիներն առաւ ու այրը մտաւ: Ինչ

կար չկար ժողովեցին, ջորիները բեռնեցին:

Ասաց.— Ձենով-Յովան, այդ գանձն ու հարստութիւնը քեզ, այս քուռակն ինձ լինի. տալիս եմ տուր, չես տալիս, քեզ էլ սրանց օրին կը հասցնեմ:

Նա ասաց.— «Ո՛րդի, գանձն էլ քեզ, քուռակն էլ. ես ինչ եմ անում»:

Դաւիթն այդ որ լսեց, ուրախացաւ, հեծաւ քուռակը. մէկ այս կողմ քշեց, մէկ այն կողմ: Յետոյ ապրանքով ու բեռներով Սասուն եկան:

Ձենով-Յովանը Դաւիթին տուն բերաւ, հացի ու կերակրի բանալիները նրան տուաւ, ասաց.— Ինչ հիւր որ գայ, կընդունես, հաց կը տաս՝ կուտի, ճանապարհ կ'գնես:

* *

Այսպէս անցաւ մի երկու ամիս: Ձենով-Յովանի կնիկ Սառան չարհոգի կին էր: Դաւիթը սիրուն ու գեղեցիկ տղայ էր. Սառան աչք էր դրել Դաւիթի վրայ: Մի անգամ ջուր վերցրեց, տարաւ, որ լողանայ. Դաւիթն էլ կանչեց, որ ջուրն ամի: Դաւիթն ամաչեց. աչքերը փակեց, որ հօրեղբօր կնոջ մերկութիւնը չտեսնի: Եւ այդպէս նրա գլխին ջուր ամեց:

Սառան որ գլուխը լուացաւ, բարձրացաւ, տեսաւ՝ Դաւիթն իւր աչքերը բռնել, փակել է. լաց եղաւ, գլուխը ծեծեց, երեսը պատռեց, մազերը քրքրեց: Եւ այդպէս՝ տխուր ու սգաւոր գնաց, տանը նստեց, մինչեւ Ձենով-Յովանը եկաւ: Հարցրեց.— Ա՛յ կնիկ, քեզ ի՞նչ է պատահել:

Կնիկն ասաց. «Ի՞նչ պիտի պատահի: Ես կարծում էի, թէ Դաւիթն ինձ համար որդի ես բերել. չէի կարծում՝ թէ դու գնացել, ինձ համար մարդ ես բերել:

Ասաց.— Հէ՛յ կնիկ, այդպէս չի, դու ինձ խաբում ես:

Կնիկն ասաց. «Զեմ խաբում. եկաւ, ձեռն տուաւ ինձ, ես թոյլ չտուի»:

— Որ այդպէս է, ասաց Ձենով-Յովան, իրիկուն դուռը փակենք, ներս չթողնենք:

Իրիկունը Ձենով-Յովանը դուռը պնդեց, Դաւիթին տուն չթողեց:

Դաւիթն ասաց.— Հօրեղբայր, կարող էի այնպէս զարկել, որ դու էլ, քու դուռն էլ գետնի տակ անդունդը խրուէր, բայց ի՞նչ անեմ, փառ կնոջից խաբուած ես:

ԴԱԻԹԸ ԳՐԱԻՈՒՄ Է ԻՒՐ ՀՕՐ ՈՐՄԻ ՍԱՐԸ.

Դաւիթն իրեն համար նետ ու աղեղ չինեց, քուռակը հեծաւ, գնաց որս անելու: Գնաց մի պառաւի կորեկի արտ մտաւ. լոր ու ճնճղուկ է որսում:

Պառաւն իմացաւ այդ, արտն շտապեց. տեսաւ, որ Դաւիթը արտը տրորել, փշացրել է: Բարկացաւ, ասաց. «Դաւիթ, գրողը քեզ տանի, մահը քեզ տանի, իմ ապրուստն այդ մի արտ կորեկն էր, այն էլ փշացրիր: Որս ես ուղղում, գնա՛քո հօր որսի սարը, վայրի ոչխար կայ, այծ կայ, եղջերու կայ, գնա՛, այն սպանիր. ի՛նչ ես լորի ու ճնճղուկի ետեկց ընկել:

Ասաց.— Պառաւ, հոգուդ-արեւիդ մատաղ, որտեղ է այդ սարը, ինձ ցոյց տուր:

Ասաց. «Գնա՛ քո հօրեղբայր Ձէնով-Յովանի մօտ, քեզ կասի:

Գնաց Դաւիթը, հօրեղբօրն ասաց լացով. «Հայրազունժ հօրեղբայր, հայր չունեմ, ինձ հայրութիւն արա.

«Սե սարն եմ տեսել, բարձր բուրգերով, կոլոր բուրգերով.

«Թէ ճիշտ սիրում ես դու քո Աստուծուն,

«Գնանք, որս անենք, գնանք, որս անենք»:

Հօրեղբայրն ասաց.— Ո՛րդի, Մհերը որ մեռաւ, Մսրամելիքն այդ սարը մեր ձեռքից առաւ. էլ չենք համարձակուում մենք այնտեղ գնալ:

Ասաց.— Հօրեղբայր, դու ինձ ցոյց տուր, ես մեր սարը գնամ, թող Մսրամելիքը գայ, ինձ սպանի:

Ասաց.— Դաւիթ, որ այդպէս է, էգուց մ՛նա, միւս օրը կգնանք:

Առաւօտը Դաւիթը քնից վարժեց, վեր կացաւ, պառաւի մօտը գնաց, ասաց.

«Ա՛յ պառաւ, այդ Մսրամելիքն ի՛նչ բան է. չէ՞ որ նա Մսրայ թագաւորն է. ուրեմն ի՛նչ գործ ունի իմ հօր հողերի հետ:

Պառաւն ասաց.— Ո՛րդի, Մսրամելիքը զօրով է խլել. եթէ դու քաջ ու կտրիճ լինես, չես թողնիլ:

* * *

Այդ օրն անցաւ. միւս օրը Ձէնով-Յովանն ու Դաւիթը ճանապարհ ընկան, Մհերի որսի սարը գնացին: Որ հասան, Յովհանն ասաց.

— Դաւիթ, այս քո հօր որսի սարն է: Քո հօր ժամանակ այս սարի շորս կողմով պարիսպ

էր քաշած: Մհերը որ մեռաւ, Մսրամեղիքն
եկաւ, պարիսպը քանդեց: Այժմ այս տեղերն
իւրն է համարում, միշտ գալիս, ոչխար, այծ ու
եղջերու է որսում:

Դաւիթը դէս ու դէն ընկաւ, շատ ման
եկաւ. գնաց, անտառի մէջ մի տուն տեսաւ:
Աստծու հրամանով տան դռները բացուեցան:
Դաւիթն ներս մտաւ. սիւներն ու պատերը
ոսկու և արծաթի մէջ կորած են. ժամի հան-
դերձներ, անգլին թագեր, անգլին բուրվառներ,
անգլին խաչեր, շուրջառներ, ոսկեկող անետա-
րաններ: Լաց եղաւ Դաւիթն, ասաց. — Այս
սուրբ տեղերի վրայ այն անհաւատը պիտի իշխի:

Եկաւ, Ձէնով-Յովանին գտաւ: Չատ էին
դադարել. մութն էլ վրայ էր հասել: Սարի
վրայ պառկեցին, որ քնեն: Դաւիթը քնեց. հօ-
րեղբօր քունը չտարաւ: Ելաւ Դաւիթի անթարու
փէշն իւր տակն առաւ, պառկեց: Նոր որ քնեց:

Դաւիթը զարթնեց. գիշերուայ կէսն էր:
Դէպի Սասնու սարի գլուխը նայեց, տեսաւ, որ
լոյսը կամար է կապել, կանգնել: Ասաց. — Ո՛վ
Աստուած. եթէ հօրեղբօրս զարթեցնեմ, պիտի
վեր կենայ, ասի թէ Դաւիթ վախեցաւ, եթէ
չզարթեցնեմ, իմ անթարու փէշը նրա տակն է:

Դանակը հանեց, տուաւ, անթարու փէշը
կտրեց, հօրեղբօրը քնած թուղեց, ինքը դէպի

լոյս գնացը. տեսաւ մի անգլին մարմար քար
է, ճղուել է, միջից լոյս է բղխում:

Դիշեր էր. Դաւիթը քարի վրայ նշան թո-
ղեց, յետ դարձաւ, հօրեղբօր մօտը եկաւ, տե-
սաւ, հօրեղբայրը գեռ քնած է: Կանչեց ու
ասաց.

«Հայրագո՛ւթ հօրեղբայր, վե՛ր, վե՛ր,

«Հայր չունեմ, դու ինձ հայրութիւն արա.

«Քո անուշ քնից վե՛ր, վե՛ր,

«Այսօր ինձ հայրութիւն արա.

«Մարմար քարը տես, տես,

«Փայլում է արեւի պէս.

«Լոյս է երկնքից իջել,

«Թագ ու կամար է կապել»:

Հօրեղբայրը զարթնեց: Դաւիթն ասաց.
— Հօրեղբայր, տեսնո՞ւմ ես այն լոյսը. քեզից
երեք հարիւր վարպետ եմ ուղղում, երեք հարիւր
մշակ, երկրագործ, որ այս շաբաթ այստեղ
բանեն, Մարութայ բարձր Աստուարածնի վան-
քը շինեն:

Նոյն ժամին հօրեղբայրը քաղաք իջաւ,
երեք հարիւր վարպետ, երեք հարիւր մշակ,
երկրագործ հաւաքեց, բերաւ սարի գլուխը:
Մինչեւ շաբաթ օրը վանքը շինեցին, աւարտե-
ցին:

Չաբաթ օրը եկաւ, ասաց. — Հօրեղբայր,

քեզնից քառասուն վարդապետ, քառասուն տէր-
տէր, քառասուն էլ սարկաւազ եմ ուզում, որ
զան, վանքն օրհնեն, պատարագ անեն:

Այդպէս էլ արին, վանքի վրայ պահապան-
ներ դրին, Սասուն դարձան:

Ա Ռ Ա Ջ Ի Ն Կ Ռ Ի Ի.

Մարմեղիքը լսեց, որ Դաւիթը Սեւ սարը
գրաւել, Մարութայ վանքը նորոգել է: Չորս
մարդ ուղարկեց Սասուն՝ Կողբադին, Բադին,
Սիւգին և Չարխադին: Եօթը տարուայ հարկ
է պահանջում: Կողբադինն ասում է.

«Կառնեմ Սասունից քառասուն աղջիկ գե-
ղեցիկ,

«Քառասուն կարճ կնիկ, որ երկանք աղան,

«Քառասուն էլ երկայն, որ ուղտեր բեռնեն,

«Բեռներով ոսկի կտանեմ՝ հարկ եօթը
տարուայ,

«Սասուն կաւերեմ, քարուքանդ կանեմ»:

Դաւիթը ոչինչ չգիտէր. նա մի չեղպիկ է
գտել, պառաւի արսն է գնում, չաղկամ, հանում
ուտում:

Պառան եկաւ.— Դաւիթ, դու իմ կորեկը
տորեցիր, հերիք չէ, հիմի էլ չաղկամ ես
փշաջնում: Մի հատ աղջիկ ունէի, այն էլ քո

սլառճառով Մարմեղիքի համար է տարւում:

Դաւիթն ասաց.— Ինչ ես ասում, պառաւ,
այդ ինչ զրոյց է:

Ասաց.— Մարմեղիքը մարդիկ է ուղարկել,
եօթը տարուայ հարկ է պահանջում՝ բեռներով
ոսկի, քառասուն կոյս աղջիկ, քառասուն կարճ
կնիկ, որ երկանք աղան, քառասուն էլ երկայն,
որ ուղտեր բեռնեն:

Ասաց. «Պառաւ, դրանք սրտեղ են, ինձ
ցոյց տուր:

Ասաց.— Ձեր տան մօտը մի աւերակ մա-
րաք կայ, կանանցն ու աղջկանցն այնտեղ են
փակել, քո հօր գանձատանն էլ հօրեղբայրդ
ոսկի է չափում:

Դաւիթն ասաց. «Պառաւ, գնանք, ցոյց
տուր:

Ասաց.— Գնա, դու կտեսնես:

Վեր կացաւ Դաւիթը, գանձատուն գնաց:
Տեսաւ Մարմեղիքի մարդիկը կանգնած, հօրեղ-
բայրն էլ ոսկին է չափում: Չէնով-Յովանն այն-
քան չափել էր, որ դադարել, քրտնել էր:

Դաւիթը կանչեց, ասաց.— Հօրեղբայր, վեր
կաց, ես եմ չափում:

Յովանը չափելու պղինձը Դաւիթին տուաւ,
ինքը վերկացաւ: Դաւիթը նստեց. պղինձը
երեսվար գետնին է դնում, ոսկին պղնձի

տալին է ածում, մի փայտով սրբում, ապա դարտակ պղինձը ջուալի մէջն է գծում.— Այս մէկ:

Այդպէս երկու, երեք, չորս... մինչև Բագինը բարկացաւ. «Այդ ի՞նչ ես անում:

Դաւիթն էլ բարկացաւ. աչքերն արիւնով լցուեցան: Պղինձը վերցրեց, այնպէս զարկեց, որ Բագնի թեւը թռաւ, Սուգնի էլ ականջը, քիթն ու պոռնկը կտրեց: Կողբաղին ու Չարխաղին փախան, գնացին: Դաւիթը գնաց, մարաքի դուռը բաց արաւ, կանանցն ու աղջրկանցը բաց թողեց: Նրանք Դաւիթին օրհնելով գնացին:

Կողբաղինը լուր տարաւ Մարամելիքին, ասաց.— Մի տղայ է եղել հայոց ազգին, մեր ճրագը անցրեց:

— Հապա ի՞նչ անենք:

Ասացին. «Դաւիթն է. ուրիշ մարդ չկայ: Մասնու սարի գլխին մի վանք է շինել, քառասուն տէրտէր, քառասուն վարդապետ, քառասուն սարկաւազ դրել:

Մարամելիքն ասաց.— Կողբաղին, դու պատրաստութիւնդ տես, պիտի Մասնու սարը գնաս,

Մարութայ բարձր Աստուարածինը թալանես, աւերես, գաս:

Ելաւ Կողբաղինը, երեք հարիւր մարդ ժողովեց, վանքի վրայ գնաց: Պահապաններն այդտեղ չէին, քաղաք էին գնացել:

Կողբաղինը կոտորեց քահանաներին, վարդապետներին ու սարկաւազներին. մէկ սարկաւազ միայն ազատուեց: Կողբաղինը վանքն աւերեց, ինչ կար չկար սրբեց, առաւ, գնաց Մարը:

Ազատուած սարկաւազն էլ Մասուն եկաւ: Հարցրեց.— Ո՞րտեղ է մեր տէր Դաւիթը:

Ասացին. «Պառաւի տանը գինի է խմում».

Գնաց, դռան առաջը կանգնեց, կանչեց.

— Մեր տէր Դաւիթ նստել է կերուխումի, խմում է կարմիր գինի...

Դաւիթը խօսքը կտրեց, ասաց. «Վանքի խոնկն է պակաս, թէ ձէթը, տուէք, սարկաւազը տանի»:

Սարկաւազը վրայ բերաւ.— Ոչ խոնկն է պակաս, ոչ ձէթը: Յետոյ արիւնոտ շապիկը հանեց, Դաւիթի առաջը գծեց, ասաց.

«Ափսոս, հազար ափսոս,

«Սպանեցին վարդապետներ,

«Որ ոսկի գաւազան բռնում,

«Քարոզում էին ժողովրդին:

«Ափսոս, հազար ափսոս,
«Սպանեցին քառասուն տէր տէր,
«Որ ոսկի սկիհ էին բռնում,
«Սրբութիւն տալիս ժողովրդին:

«Ափսոս, հազար ափսոս,
«Սպանեցին քառասնից պակաս մէկ տիրացու,

«Որ ոսկի բուրվառ ձեռքին՝
«Խոռնկ էին ծխում ժողովրդին»

Դաւիթն էլ չհամբերեց, վեր կացաւ, անթարոցն *) առաւ, Կողբաղին ետևից ընկաւ, գնաց: Հասաւ նրանց. մի բարտի ծառ արմատով հանեց, երեք անգամ զարկեց, ամենքին կոտորեց: Մնաց Կողբաղինը: Դաւիթը հասաւ, նրան էլ բռնեց: Նա ասաց. — Դաւիթ, թէ քո Աստուածը կսիրես, ինձ մի սպանիր.

Դաւիթը չսպանեց. պռունկները կտրեց, ատամները հանեց՝ ճակատին չարեց, ասաց. — Գնա, իմաց տուր քո Մարամեղիքին, ինչ կարող է, թող անի:

Մ Ե Ծ Պ Ա Տ Ե Ր Ա Զ Մ Ը.

Մարամեղիքը նայեց, Կողբաղինը գալիս է բերանը բաց, ծիծաղելով. Մտածեց. — Չա՛տ

*) Թոնիր խառնելու փայտ:

աւար է բերում: Եւ ուրախացաւ: Բայց որ Կողբաղինը մօտեցաւ, Մարամեղիքը տեսաւ, որ մեռաւ է և դատարկ: Ասաց.

— Կողբաղին, ո՛ր եմ քո զօրքն ու աւարը: Ասաց.

«Զէի ճանաչում Սասունցիներին.

«Նրանց խոտերն են կծան,

«Նրանց նետերն են գերան.

«Դաւիթը՝ զարկեց մեր զօրքին,

«Հանեց ամենքի հոգին»:

* *

Մարամեղիքը մոռնեալիկներ արձակեց, իւր զօրքին հրաւիրեց.

«Թող ժողովուին հարիւր հազար նորեղակ տղայ,

«Թող ժողովուին հարիւր հազար բեխաւոր տղայ,

«Թող ժողովուին հարիւր հազար թխամորուս,

«Թող ժողովուին հարիւր հազար սպիտակամորուս:

Տասներկու տարեկան երեխաներից սկսած մինչև արևոր ծերերին գէնքի հրաւիրեց. ինքն էլ այդ զօրքի գլուխն անցաւ և Սասուն քաղաքի վրայ գնաց: Մարդ ուղարկեց Ձէնով-Յովա-

նին, ասաց.— Ձէնով-Յովան, ահա գալիս եմ
մեծ զօրքով. թէ եօթը տարուայ հարկը տա-
լիս ես, տուր, թէ չես տալիս՝ Սասունը կաւերեմ:
Յովանն ասաց.— Մենք չենք կարող կռիւ
անել. թէ կռիւ անի, Դաւիթն է: Սպասեցէք,
նրան հարցնենք:

Դաւիթն ասաց.— Մտրամելիքին ես հարկ
չեմ տալ. ինչ կարող է, թող անի:

Յովանն ասաց.— Դաւիթ, որ այդպէս է,
այս գիշեր կգան, մեր քաղաքի վրայ կլծափուեն,
կաւերեն:

Ասաց. «Հօրեղբայր, դուք գնացէք, ձեր
տանը քնեցէք. ես առաւօտը կռուելու կգնամ:

Գիշերը Դաւիթի քունը չտարաւ: Առաւօտը
վեր կացաւ, նետ ու աղեղը վերցրեց, քուռակը
հեծաւ, գնաց:

Պառաւր տեսաւ, ասաց.— Դաւիթ, ուր ես
գնում:

Ասաց.— Գնում եմ Մտրամելիքի հետ կռուեմ:

«Դու ի՞նչ ունես, նետ ու աղեղով պիտի
կռուես:

— Հասլա ի՞նչ անեմ:

Պառաւն ասաց. «Ափսոս չէ՞ր դու այն հօր
տղան լինիս:

«Քո հայրն ունէր Քուռկիկ ջալալին,

Գլխի գօտի,

Քամար ոսկի,

Թուր կայծակի,

Կապայ կաղըֆի,

Կօշիկ եղան կաշուի,

Պայտ պողպատի,

Թամբ սաղափի,

Ասպանդակ ոսկի,

Սանձ պողպատի,

Որ դնես Քուռկիկ-Ջալալի բերնին,

Մարութայ բարձրիկ Աստուարածին

Խաչ-պատրազին,

Որ իւր աջ թևին:

Դաւիթն ասաց.— Պառաւ, զրտեղ են դրանք:

Ասաց. «Քո հօրեղբօր մօտ են, բայց նա
սիրով չի տալ, պէտք է ուժով առնես»:

*
* *

Դաւիթը Ձէնով-Յովանի մօտ գնաց, նրա
փողպատը բռնեց, թափ տուաւ. ոտքերը գետնից
կտրեց: Ասաց.— Հօրեղբայր, քեզնից ուզում եմ՝

Քուռկիկ-Ջալալին,

Գլխի գօտին,

Քամարը ոսկի,

Թուր կայծակին,

Կապան կաղըֆին,

Կօշիկն եղան կաշուի,

Պայտ պողպատի,
Որ դնեմ Քուռիկ Ջալալի բերնին,
Մարութայ բարձրիկ Աստուարածին
Խաչ-պատրագին»:

Հօրեղբայրն ասաց.—Այդ քո խօսքը չէ,
Դաւիթ, քեզ սովորցնողի բերանը կոտորուի:

Ասաց.—Հօրեղբայր, կտաս, տուր, չես
տալ՝ զօրով կառնեմ:

Ասաց.—Այ որդի, նոր եօթը տարիդ լը-
րացրիր. դու ինչ կռուող ես:

Ասաց. «Պիտի երթամ. Աստուած եմ կան-
չում, թշնամուս առաջ գնում, կամ ես կյաղ-
թեմ, կամ նա:

Յովանն ասաց.—Որդի, այն օրից, որ քո
հայրը մեռել է, Քուռիկ-Ջալալին գոմումն է
փակած. Մսրամելիքի վախից դեռ դուրս չեմ
հանել, գոմի դուռը պատ եմ շարել, նրա խո-
տը, յարդը, դարին երդիկով եմ տուել: Համա
մենակ Քուռիկ-Ջալալին չէ, գոմում կարգով
երեք հարիւր ձի կայ կապած: Գնա, որը կհա-
ւանես՝ քեզ լինի:

Դաւիթը գնաց. գոմը մտաւ, ձիերի
մէջքին կարգով ձեռք տուաւ, ամենքը փորները
գետնին տուին: Դաւիթն ասաց.—Այս չէ Քուռ-
իկ-Ջալալին: Առաջ գնաց, մի դուռ տեսաւ,
որ պատ էր քաշած, ծածկած: Ոտով խփեց,

պատը քանդուեց: Տեսաւ՝ մի հրաշալի ձի է
կապած: Ձեռը մեկնեց, որ ձիու մէջքին դնէր,
ձին աքացի տուաւ. Դաւիթին չղիպաւ, պատին
ղիպաւ, պատը շուռ եկաւ: Լաց եղաւ Դաւիթը,
ասաց. «Քուռիկ-Ջալալին, ես այնպէս էի կար-
ծում, թէ դու այս կռուից ինձ կազատես»:

Ասածու հրամանով ձին լեզու առաւ, ասաց.

—Դաւիթ, որ այդպէս է, ես քեզ, դու
ինձ: Տես՝ ինչ քո հայրը մեռել է, հօրեղբայրդ
ինձ չի հանել, բանտարկեալի պէս է պահել:

Դաւիթը ձեռ տուաւ Քուռիկ-Ջալալի մէջ-
քին, տեսաւ՝ մէկ թիզ աղբ ու կեղտ կայ:
Ձին դուրս հանեց, պառաւի մօտ տարաւ, ա-
սաց.—Պառաւ, մի գլուխ սապոն վերցրու, եր-
կու պղինձ ջուր տաքացրո՛ւ, մի լաւ լուացիր:
Յետոյ ինքը Ձէնով-Յովանի մօտ գնաց, ասաց.

—Հօրեղբայր, այժմ միւս բաներն եմ ու-
զում, բեր, լրիւ ինձ տուր:

Գնաց հօրեղբայրը, բերաւ գլխի թաղբ,
ոսկի քամարը, կայծակի թուրը, կաղըֆի կա-
պան, եզան կաշուի կօշիկը, պողպատի պայտը,
յանձնեց Դաւիթին, ասաց.—Որդի, խաչպատրա-
զինը ես չեմ կարող բերել, քո հայրը որ մե-
ռել է, սնդուկի մէջ եմ դրել, պնդել. էլ չեմ
համարձակուել մօտենալու: Գնա, ծունդ չողիր
սնդուկի առջև, քո Աստծուն կանչիր, եթէ

հորդ պէս արդար ես, եթէ դու էլ արժանի ես, սնդուկը կբացուի, Խաչատրազիւնը դուրս կգայ, քո աջ թևին կկանգնի:

Դաւիթը գնաց, ծունդ չողեց սնդուկի առջև, լաց եղաւ, Աստուած կանչեց: Ասածու հրամանով սնդուկը բացուեց, Խաչատրազիւնը թռաւ, Դաւիթի աջ թևին կանգնեց:

Հեծաւ Քուռիկ-Ջալալին, թազը գլխին դրաւ, կապան հագաւ, կայծակի թուրն ու ոսկի քամարը կապեց:

Քամարը Դաւիթի մէջքով քառասուն պատ եկաւ. կայծակի թուրը գետնովն էր քարշ գալիս, թագն այնքան մեծ էր, որ մէջը քառասուն լիտր բամբակ դրին, նոր գլխին եկաւ: Այդպէս էլ միւս բաները, որ Մհերինն էին, բայց հիմի մի մանուկ էր հագնում:

*
* *

Այդպէս զինուեց, զարդարուեց Դաւիթը, գնաց, տան յետեր կանգնեց, ասաց, — Տեսնե՞նք հօրեղբայրս ի՞նչ պիտի ասի:

Հօրեղբայրն ասաց.

«Ափսոս, հազար ափսոս,

Գնաց Սասնու տնից՝ Քուռիկ-Ջալալին,

Դիւի թազը,

Քամարը ոսկի:

Կապան կադրֆի,

Կօշիկը եղան կաշուի,

Պայտը պողպատի,

Թամբը սադաֆի,

Ասպանդակ ոսկի,

Սանձը պողպատի,

Ափսոս, հազար ափսոս՝

Գնաց Սասնու տնից թուրը կայծակի»:

Դաւիթը վիրաւորուեց, բարկացաւ, ձեռքը դէպի թուրը տարաւ, որ հանի, հօրեղբօրը խփի:

Ձէնով-Յովանը շարունակեց.

«Ափսոս, հազար ափսոս.

Մեր Թլոր-Դաւիթին»:

Դաւիթն ասաց. — Հօրեղբայր, քո բերանը կոտրուէր, այդ մի խօսքը չասէիր, եթէ ինձ չյիշէիր, քո վիզը պիտի կտրէի:

Հաց եղաւ Դաւիթը, հօրեղբօր մօտը գընաց, նրա ձեռը համբուրեց, հօրեղբայրն էլ Դաւիթի գլուխն համբուրեց:

Դաւիթը կանչեց, ասաց.

«Ո՛վ քոյրեր, մնացէ՛ք բարով,

«Ինձ քոյրութիւն էք արեւ.

«Ո՛վ մայրեր, մնացէ՛ք բարով,

«Ինձ մայրութիւն էք արեւ.

«Բարի՛ գրացիներ, մնացէ՛ք բարով,

«Մնացէ՛ք բարով

«Մեծ ու պատկով»:

Հօրեղբայրն ասաց.— Ա՛յ որդի, գնում ես, լսիր, քեզ մի խրատ տամ, ականջ դնես: Ուր որ քո ձին ծնգները գետնին դարկի, այնտեղ վայր կգաս, ձիդ կկապես, կկերակրես, քո տեղն էլ չորս հօտի մէջ կշինես, այնտեղ կքնես: Որ գընաս, դաշտի մէջ մի պողպատէ սիւն կայ. քո հայրն երբ կռուի էր դուրս գալիս, դարկում էր պողպատէ սիւնին. եթէ կտրում էր, բանը յաջող էր, գնում էր, եթէ չէ՝ յետ էր դառնում: Դու էլ պողպատէ սիւն կտեսնես, կդարկես, թէ կտրեց, գձեց, քո բանն յաջող է՝ գնա, թէ չէ՝ յետ դարձիր, տոն եկ:

*
* *

Ձին քչեց, գնաց: Կաթնաղբիւրի վրայ Քուռկիկ-Ջալալին ծնգները գետնին դարկեց: Դաւիթը ասպանդակներով ձիու կողքերին խրփեց, մի կողաշարը կտրեց: Ասաց.— Մի ժամ ճանապարհ ես եկել, ի՛նչ ես շուտ դադրել:

Ձին բարկացաւ, ասաց.— Ի՞նչպէս ես՝ արեգակովը տամ, այրուես. քո հօրեղբօր խրատն ի՛նչ շուտ մոռացար:

Դաւիթը զղջաց, վէր եկաւ, կաթնաղբիւրի ջուրը տուաւ, ձիու կողաշարը լաւացաւ:

խոտ ու ջուր տուաւ նրան, ինքն էր կաթնաղբիւրի ջրի մէջը մտաւ, լողացաւ: Դուրս եկաւ, հաց կերաւ, ջուր խմեց, ձիու ոտները մէջ մըտաւ, քնեց:

Մի ժամ քնեց. երբ դարթնեց, տեսաւ, այնպէս է լցուել, այնպէս հաստացել, այնպէս զօրութիւն, ոյժ առել, որ դարմանալի: Թագի միջից քառասուն լիտր բամբակը հանեց, նոր գլխին եկաւ. մէջքի գօտիկը, որ քառասուն պատ էր գալիս, այժմ մի պատ դարձաւ. թուրը, որ գետնով քարշ էր գալիս, այժմ ծնգներին է հասնում: Այգպէս էլ միւսները:

*
* *

Բարի լոյսը բացուեց: Վեր կացաւ Դաւիթը, իւր աղօթքն արաւ, ձին հեծաւ, քչեց, գնաց, պողպատէ սիւնի մօտ կանգնեց: Քաշեց թուրը, դարկեց: Սիւնը կտրուեց. այնպէս կըտրուեց, ասես պողպատ չէր, պանիր էր: Կտորը կտորի վրայ մնաց, վայր չընկաւ: Դաւիթը կարծեց, թէ սիւնը չի կտրուել, ասաց.

«Ձեռնի՛կ, դու չորանաս,

«Որ դարկեցիր սիւնը չկտրուեց.

«Աչքի՛կ, դու խաւարուես,

«Որ այս բանը չտեսնէիր»:

Ասաց, ձեռքը կոտորուեց, աչքը խաւարեց:
Հաց եղաւ Դաւիթը, տխուր, յուսահատ լաց
եղաւ: Մտածեց, որ յետ դառնայ, տուն գնայ:
Բայց մէկ էլ մօտեցաւ սիւնին, փչեց: Որ փչեց,
վերեւի կտորը թռաւ, վայր ընկաւ: Ուրախացաւ
Դաւիթն, ասաց.

«Զեռնի՛կ, դու կանաչ լինիս,

«Որ զարկեցիր, թուր կտրեցիր.

«Աչքի՛կ, դու պայծառ լինիս,

«Բարի նշան ես տեսնում»:

Ասածու հրամանով ձեռքն առողջացաւ,
աչքը լուսաւորուեց:

Զին հեծաւ, քշեց, գնաց, սարի գլուխն
եղաւ: Նայեց, տեսաւ, որքան աստղ կայ երկրն-
քում, Մսրամելիքն այնքան վրան է զարկել
դաշտի մէջ: Վշտացաւ Դաւիթն, ասաց.

«Օրհնեա՛լ, բարերար Աստուած,

«Ես ի՛նչ անեմ.

«Եթէ նրանք կորեկի արտ՝

«Իսկ ես մանգաղ դառնամ,

«Զեմ կարող նրանց հնձել.

«Եթէ նրանք բամբակ՝

«Իսկ ես կրակ դառնամ,

«Զեմ կարող այրել.

«Եթէ նրանք դառներ դառնան,

«Ես քաղցած գայլ՝

«Զեմ կարող նրանց յաղթել:

Ասածու հրամանով Քուռիկի-Ջալալին լե-
զու առաւ, ասաց. — Դաւիթ, տնաւեր, ի՛նչ ես
վախենում: Որքան քո թուրն սպանի, այնքան
իմ պոչի մագերը կկոտորեն. որքան քո թու-
րը կտրի, այնքան իմ շունչը կայրի. որքան քո
թուրը կտրի, այնքան իմ ոտները կջարդեն:
Մի՛ վախենար. Աստուածդ կանչի:

Մտածեց Դաւիթն, ասաց. «Ի՛նչ անեմ,
Աստուած, թէ գաղտնի գնամ, կասեն՝ Դաւի-
թը գող եկաւ, գող գնաց. թէ գաղտնի չգնամ,
վախենում եմ նրանց շատութիւնից:

Առաջ անցաւ, կանչեց.

«Ով քնած է, թող շուտ զարթնի,

«Ով զարթուն է, թող շուտ կանգնի.

«Ով կանգնած է, դրահներ կապի,

«Ով կապել է, ձիեր թամբի,

«Ով թամբել է, շուտով հեծնի,

«Զասէ՛ք՝ Դաւիթը գող եկաւ,

Գող գնաց:

Ասաց, քշեց, զօրքի մէջը մտաւ. երկու
գլուխ գնաց, եկաւ, դաշտը կարմիր ներկուե-
ցաւ. արեան գետ բարձրացաւ, անթիւ դիակ-
ները քշեց, տարաւ:

Զօրքի մէջ մի ծերունի կար, ասաց. «Ճա-
նապարհ տուէք, Դաւիթի մօտ գնամ, մի խօսք

ասեմ, այս խեղճերին մահից ազատեմ: Եւ մարդկանց բազմութիւնը ճղելով, Դաւթին մօտեցաւ, ասաց.— Դաւիթ, այս խեղճերի մեղքի տակ մի մտնիր. մէկը փեսայ է, մէկը մօր մինուճար որդին է. մէկը կայ՝ ընտանիքի միակ աշխատող ձեռքն է. Մարամեղիքը ամենքին դօրով, ծեծելով է բերել: Եթէ դու կտրիճ ես, գնա, Մարամեղիքի հետ կռիւ արա:

Ասաց.— Ալսոր, ո՞րն է նրա վրանը:

Ասաց. «Այն մեծ կանաչ վրանը:

* *

Զին քչեց, գնաց, Մարամեղիքի վրանի առջև կանգնեց: Պահապաններին կանչեց, ասաց.— Կանչեցէ՛ք Մարամեղիքին, 'գայ՝ կռիւ անենք: Թէ անմահ է, նրան մահ եմ բերել, թէ անգրող է, նրան գրող եմ բերել:

Ասացին.— Մարամեղիքը քնած է. նա եօթն օրէ ընում, դեռ երեք օրն է անցել:

Ասաց. «Զեմ սպասիլ, պէտք է վեր կացնէք:

Ճամփուրներ բերին, կրակին գցեցին, կամրացրին, Մարամեղիքի ոտքին տուին: Մարամեղիքը քնի մէջ ասաց.— Անպիտաններ, իմ

տեղն այսօր լաւ չէք շինել. լու կայ, ինձ կըծում են:

Դաւիթն ասաց. «վեր կաց, լու չէ, ես եմ»: Մարամեղիքն էլի քնեց:

Դուլթանի խոփ բերին, հնոցի մէջ գցեցին, չիկացրին, Մարամեղիքի ոտքին տուին: Ասաց.— Անպիտաններ, իմ տեղըն այսօր լաւ չէք շինել, լուերն ինձ կ'ծում են:

Դաւիթն ասաց.— Մարամեղիք, վեր կաց, ես ու դու կռիւ անենք: Անմահ ես՝ քեզ մահ եմ բերել. անգրող ես՝ քեզ գրող եմ բերել:

Վեր կացաւ Մարամեղիքը. որ Դաւթին տեսաւ, փչեց: Նրա խեղքով Դաւիթը պիտի թռչէր: Բայց Դաւիթը կանգնած է:

Ասաց. «Դաւիթ, արի՛ նստիր. ուտենք, զրոյց անենք, յետոյ վեր կենանք, կռուենք:

Դաւիթը ձիուց վէր եկաւ, ձին փախաւ: Զին իմաստուն էր, գիտէր, որ Մարամեղիքը քառասուն նետաչափ հօր է փորել, հօրի բերանը թաղիքներով ծածկել:

Դաւթին խաբեցին, ձիուց վէր բերին: Զին բարկացած՝ թէ ինչո՞ւ Դաւիթը վէր եկաւ, սարի գլուխը գնաց: Դաւթին հօրի վրայ նստեցրին. հօրի մէջն ընկաւ: Մարամեղիքն ասաց. «Նա պիտի ինձ հետ կռիւ անէր. թող մնայ այնտեղ, մինչև ոսկորները փտեն»:

* *

Գիշերը վրայ հասաւ։ Ձէնով Յովանն երազ տեսաւ. Մսրայ աստղը պայծառ է, Սասնու աստղը մռայլ։ Քնից վեր կացաւ, ասաց. «Կընիկ, վեր կաց, Դաւիթը ձեռքից դնաց։ Երազ տեսայ՝ Մսրայ աստղը պայծառ էր, Սասնու աստղը մռայլ»։

Կնիկն ասաց.—Քո տունը չաւերուի, քեզ համար քնում ես, ուրիշի համար երազ տեսնում։

Ձէնով-Յովանն էլի քնեց։ Նոր երազ տեսաւ. Մսրայ աստղը շատ պայծառ, Սասնու աստղը մարելու վրայ էր։ Վեր կացաւ, կանչեց. «Կնիկ, վեր կաց, ես տեսայ՝ Մսրայ աստղը շատ պայծառ, Սասնու աստղը մարելու վրայ էր»։

Կնիկն ասաց.—Այ մարդ, ինչո՞ւ չես քնում. ինչո՞ւ չես թողնում, որ աչքս խփեմ։

Ձէնով-Յովանն էլի քնեց. նոր երազ տեսաւ. Մսրայ աստղն եկաւ, Սասնու աստղը կուլ տուաւ։ Կանչեց. «Կնիկ, վեր կաց. Դաւիթն սպանեցին»։

Ասաց.—Այ խեղճ, հերթը չեղաւ քեզ. ինչո՞ւ չես քնում, ով գիտէ, հիմի Դաւիթը սրտեղ է քէֆ անում։

Ձէնով-Յովանը բարկացաւ. մի աքացի զարկեց կնոջը, կնիկը վեր կացաւ, ճրագը վառեց։ Յովանն ասաց. «Իմ գէնքերը բեր»։

Կնիկը բերաւ։

Յովանը դէնք ու զրահը հագաւ, դնաց, գոմի դուռը բաց արաւ։ Ձեռքը տարաւ, Սիպտակ ձիու մէջքին դրաւ։ Ձին փորը գետնին տուաւ։ Ասաց. «Սիպտակ ձի. ինձ Դաւիթի կռուին պիտի հասցնես, մինչև երբ կտանես»։

Ասաց.—Մինչև առաւօտը։

Ձէնով-Յովանն ասաց. «Հարամ լինի այն կերը, որ քեզ եմ տուել»։

Գնաց, ձեռքը կարմիր ձիու մէջքին դրաւ։ Ձին փորը գետնին տուաւ։ Ասաց. «Կարմիր ձի, մինչև երբ ինձ Դաւիթի կռուին կհասցնես»։

Ձին ասաց.—Մինչև մի ժամ։

Յովանն ասաց.—Հարամ լինի այն խնամքը, որ քեզ եմ խնամել»։

Գնաց, ձեռքը Սև ձիու մէջքին դրաւ։ Ձին փորը գետնին չտուաւ։ Ասաց. «Սև ձի, ինձ Դաւիթի կռուին պիտի հասցնես. մինչև երբ կտանես»։

Սև ձին ասաց.—Եթէ կարողանաս քեզ պահել, ոտդ դնես մի զանգուն, մինչև միւս ոտդ էլ միւս զանգուն տանես, քեզ Դաւիթի կռուին կհասցնեմ։

Յովանը ձիուն դուրս քաշեց, հեծաւ. որ մի ոտը զանգուն դրաւ, մինչև շուռ կգար, միւս ոտն էլ միւս զանգուն կտանէր, Սև ձին հրեղէն էր, թռաւ, սարի գլուխը բարձրացաւ:

Քուռկիկ-Ջալալին Ձէնով-Յովանին տեսաւ, խրխընջալով մօտ եկաւ: Յովանը վախեցաւ, ասաց. «Դաւիթն սպանուած է»:

Ձէնով-Յովանը կանչեց, ձայնը սար ու ձոր ընկաւ. անտառ ու դաշտ գողգոց:

Ասաց. «Դաւիթ, սրտեղ ես. յիշիր Մարութայ բարձր Աստուարածին, խաչ պատարաղին, որ քո աջ թիկն»:

Կանչեց, ձայնը Դաւթի ականջն ընկաւ: Դու մի ասիր, Դաւիթը փոքր է, խաչ պատարաղինի զօրութիւնը չի իմացել:

Դաւիթը կանչեց, ասաց. «Ե՛մ Մարութայ բարձր Աստուարածին, խաչ պատարաղին, որ իմ աջ թիկն»: Ասաց, իրեն թափահարեց: Աստծու հրամանով երկընքից շղթայի կտորներ կախուեցան, Դաւիթը բռնեց, թռաւ, հորից դուրս եկաւ: Մարամեղիքը սարսափեց: Յովանը Դաւթին կանչեց. — Դաւիթ, այստեղ եկ:

Դաւիթը հօրեղբօր մօտը գնաց. բայց ձին բարկացել էր, Դաւթին չէր մօտենում: Յովանը մօտեցաւ ձիուն և նրան շոյելով Դաւթի մօտ

բերաւ. Դաւիթը ձին հեծաւ, ասաց. «Հօրեղբայր, դու քաղաք գնա, ես Մարամեղիքի կռուին»:

* *

Գնաց, Մարամեղիքին հասաւ, ասաց. «Մարամեղիք, այն անգամ ինձ խաբեցիր, այժմ ինչ պիտի անես»:

Մարամեղիքն ասաց. — Լաւ, դեռ արի, նըստիր:

Ասաց. «2 է, չեմ նստիր, վեր կաց, կռիւ անենք»:

Մարամեղիքն ասաց. — Կռիւր զօրով, թէ հերթով է:

Դաւիթն ասաց. «Հերթով է»:

Ասաց. — Որ հերթով է, հերթն սեմն է. մեծը հո եմ, թէ դու:

Դաւիթն ասաց. «Հերթը քոնն է»:

Եւ գնաց Դաւիթը, հրապարակի մէջ կանգնեց: Մարամեղիքը գնաց, եկաւ, իւր գուրզը զարկեց: Փռչի բարձրացաւ, արեգակի երեսը բռնեց: Մարամեղիքն ասաց. — Դաւիթն հող էր, հող դարձաւ:

Դաւիթն ասաց. «Մարամեղիք, ես դեռ այստեղ եմ. գնա, էլի զարկիր»:

Մարամեղիքը երեք անգամ գնաց, եկաւ,

զարկեց. փոշին երկինք բարձրացաւ, արևի երեսը ծածկեց: Ջարկեց ու ասաց.— Դաւիթը հող էր, հող դարձաւ: Փոշին որ իջաւ, Դաւիթըն ասաց. «Մսրամեղիք, ես դեռ այստեղ եմ»:

Հերթը Դաւիթին հասաւ:

Մսրամեղիքն ասաց.— Դաւիթ, քեզնից խնդիր ունիմ:

Ասաց. «Ի՞նչ ունիս:

Մեղիքն ասաց.— Ուզում եմ, որ քառասուն կանգուն հոր փորեմ:

Դաւիթն ասաց. «Փորիր»:

Մսրամեղիքն ասաց.— Ես գնամ, հորի մէջը մտնեմ, քառասուն ջրաղացաքար քաշել տամ հորի վրայ, քառասուն էլ գոմշի կաշի գցել տամ քարերի վրայ, յետոյ զարկիր:

Դաւիթն ասաց.— Ինչ որ ուզում ես՝ արա՛:

Մսրամեղիքն էլ այնպէս արաւ:

Գնաց, եկաւ Դաւիթը, որ իւր գուրգը զարկէր: Մսրամեղիքի մայրն առաջ եկաւ, ասաց.— Դաւիթ, չէ՞ որ քեզ ծիծ եմ տուել. այդ մէկ զարկն ի՞նչ բաշխիր:

Դաւիթը բաշխեց:

Մէկ էլ գնաց, եկաւ, որ զարկէր, այժմ էլ Մսրամեղիքի քոյրն եկաւ, ասաց.— Դաւիթ, երբ դու փոքր էիր, քեզ շատ չալակել, ման եմ ածել. այդ մէկ զարկն եկ ի՞նչ բաշխիր:

Դաւիթը բաշխեց:

Դաւիթը մնաց, մէկ զարկ, մէկ Աստուած: Գնաց, եկաւ, որ զարկի, Մսրամեղիքի մայրն առաջ եկաւ, ասաց.— Դաւիթ, չէ՞ որ դա քեզ համար եղբայր է եղել, մե՞ղք է, մի զարկիր:

Ասաց.— Գորիր, գնա՛. էլ բաշխելու բան չմնաց. ես եմ, Աստուած և այս մէկ զարկը. պիտի զարկեմ, կամ կմեռնի, կամ կմնայ:

Դաւիթը գնաց, եկաւ, Աստուած կանչեց, յիշեց Մարութայ բարձր Աստուարածին, Խաչ պատրազին՝ որ իւր աջ թևին, և գուրգը զարկեց: Որ զարկեց, քառասուն գոմշի կաշին կրտրեց, քառասուն ջրաղացքարն էլ կտրեց, Մսրամեղիքի գազաթից էլ տուաւ, ոտքից գուրս եկաւ:

Մսրամեղիքը կանչեց, ասաց.— Դաւիթ, ես դեռ այստեղ եմ:

Դաւիթն ասաց. «Մսրամեղիք, մի քեզ թափ տո՛ւր»:

Մսրամեղիքն իրեն թափահարեց, մէկ կըտորն այստեղ, միւսն այնտեղ ընկաւ:

ԴԱԻԻԹ ԵՒ ԽԱՆԴՈՒԴ ԽԱԹՈՒՆ.

Ձայնն աշխարհ ընկաւ.—Դաւիթը Մսրամելիքին սպանեց, Մսրը քաղաքը գրաւեց:

Լուրը գնաց Կապուտկող՝ Խանդուզ խաթունին հասաւ: Խաթունը երկու աշուղի շատ փող տուաւ, ասաց. «գնացէք, Դաւթին իմ գովքը երգեցէք, որ գայ, ինձ առնի»:

Աշուղները վեր կացան, սաղերն առան, գնացին: Քնացին, Սասուն հասան, Ձէնով-Յովանին տեսան, հարցրին.

«Այս է Դաւթի քաղաքը:

«Այս է:

«Դաւիթն ո՞ւր է, մեզ ցոյց տուր:

— Ձեր ուղած Դաւիթը ես եմ:

«Դո՞ւ ես:

— Հա՛:

«Որ դու ես, նստիր, քեզ համար Խանդուզ Խաթունի գովքն անենք:

Յովանը նստեց: Նրանք սաղերն առան, երգեցին.

Նրա սիպտակութիւնը հարցնես,

Քանց զարնան ձին սիպտակ է,

Նրա նրբութիւնը հարցնես,

Քանց բամբակ նուրբ է.

Նրա ունքերը հարցնես,

Ղաւմով քաշած է.

Նրա աչքերը հարցնես,

Ծովի կապոյտն է.

Ճակտի լայնութն հարցնես,

Եօթը մատ է, դեռ մէկ աւել է...

Ձէնով-Յովանը լսեց, վեր կացաւ, աշուղներին լաւ ծեծեց, սաղերն առաւ, փչրեց:

Աշուղները լացով, Դաւթին անիծելով ու հայհոյելով հեռացան այգտեղից: Դաւիթը պատահեց, տեսաւ, որ օտար մարդիկ են, իրան հայհոյում, անիծում են:

Ասաց. «Այ մարդիկ, դուք ինչո՞ւ էք Դաւթին հայհոյում:

Ասացին.—Խանդուզ խաթունին Դաւթի մօտ գովեցինք, մեզ ծեծեց, մեր սաղերը կոտորւեց:

Ասաց. «Դաւիթը ես եմ:

Աշուղներն ասեցին՝ թէ ինչո՞ւ են եկել:

Դաւիթը երկու սաղ գնեց, աշուղներին տուեց. մէկ բուն էլ ոսկի բաշխեց, ասաց.

«Քնացէք, Խանդուզ խաթունին ասացէք, երեք օր այստեղ եմ, չորրորդ օրը դուրս կելնեմ, կգամ:

Աշուղները ելան, ուրախ ուրախ գնացին:

Չորրորդ օրը առաւօտը վաղ Դաւիթը վեր կացաւ, ձին հեծաւ, գնաց: Կէսօրին ծծմակայքիժը հասաւ: Այդտեղ գութանչիք տեսաւ, որոնք դաշտը վարում էին: Տասներկու գութան է. գութանչիքն իրանց համար վեց օրուայ հաց, կերակուր են վերցրել, բերել: Օրը երկուշաբթի էր, մինչև շաբաթ իրիկուն այդտեղ պիտի մընային:

Դաւիթը եկաւ, ասաց.

— Գութանչիք, մի կտոր հաց չկայ, որ ուտեմ, ճանապարհորդ եմ:

Ասացին. — Մեր հացն ու կերակուրն այդտեղ մօտիկ՝ գետի մօտն է. գնա. կուշտ հաց կեր, ճանապարհդ շարունակիր:

Դաւիթը գնաց, հացի վրայ ընկաւ. տասներկու գութանչու վեց օրուայ հացը միանգամից կերաւ, մանանայ չթողեց:

Գութանչիներից մէկն այդ տեսաւ, զարմացաւ, ասաց.

— Այ՛ ճանապարհորդ, դու մեր հացն ու կերակուրը բոլորը կերար, մենք այստեղ անօթի մնացինք. վեց օր այստեղ ենք, տուն չենք գնալու, մեր ետեիցն էլ հաց բերող չկայ. ի՞նչ պիտի անենք:

Դաւիթն ասաց. «Որ այդպէս է, դուք այստեղ նստեցէք, ես գնամ, մի ժամում ձեր վեց

օրուայ վարը վերջացնեմ, իրիկունը վեր կացէք, գնացէք, ձեր հացին հասէք, որ անօթի չմնար:

Դաւիթը վեր կացաւ, գութանը Քուռկիկ-Ջալալու պոչից կապեց. քչեց, այն վեց օրուայ տասներկու գութանավարը մէկ ժամում աւարտեց, մէկ գութանավար թողեց:

Ջարմացման գութանչիքն, ասացին. — Զըլինի՛ Դաւիթը դու ես:

Ասաց. «Ես եմ»:

Ասացին. — Որ դու ես, այդ քո հունարը չէր, այդ ձիուդ հունարն էր:

Վիրաւորուեց Դաւիթը, բարկացաւ, վեր եկաւ, գութանը ձեռքով բռնեց, այն մէկ գութանավարն էլ վերջացրեց:

Ասացին. — Դու բարով եկար, բարով էլ գնաս. այժմ մենք հաւատում ենք, որ դու Դաւիթն ես:

Իրիկունը գութանչիք գիւղ վերադարձան:

Գիւղի իշխանը բարկացաւ. — Ինչո՞ւ իմ արտերը թողեցիք, եկար:

Մեծ գութանչին ասաց. «Աստուած վկայ, արտերը վարել, պրծել ենք:

Իշխանը չհաւատաց, ասաց. «Մի օրում մի շաբթուայ բան կանուխ»:

Առաւօտը ձին հեծաւ, գնաց, տեսաւ, ճըշ-

մարիտ վարել, պրծել են: Ասաց. «Սա ձեր բանը չէ. ասէք տեսնեմ, ով է վարել:

Ասացին. — Դաւիթը:

Իշխանը կտրիճ մարդ էր. մի աղջիկ ունէր, անքան ուզողներ կային, ոչ ոքի չէր տալիս. աղջիկը քաջ, պահլաւան աղջիկ էր անունը Բանայ-Խանում:

Սա երգուեց, ասաց. «Թէ Դաւիթն ինձ չառնի, ուրիշի չեմ գնալ»:

Պահապաններ դրաւ կամրջի վրայ, ասաց. «Երբ որ Դաւիթը գայ, ինձ իմաց արէք»:

*
* *

Դաւիթը ձին քչեց, գնաց, Խանդուղ-խաթունի պատուհանի առաջ կանգնեց: Խաթունը որ Դաւիթին տեսաւ, ուրախացաւ: Ուրախութիւնից մի խնձոր դարկեց Դաւիթին: Դաւիթը ձիու վրայ խնձորը բռնեց, խնդաց:

Ձին քչեց, դէպի դուռը գնաց: Այնտեղ դռնապան էր կանգնած՝ անունը Համթօլ: Մէկ պռուկը կախուել էր սրտին: Դաւիթը՝ որ տեսաւ, վախեցաւ: Մօրից ծնուել էր, մարդու բարեւ չէր տուել. վախից բարեւ տուաւ Համթօլին: Համթօլն էլ քառասուն տարի այնտեղ դռնապանութիւն էր արել, մարդու բարեւ չէր ա-

ռել: Դաւթին որ տեսաւ, վախեցաւ, վախից բարեւ տուաւ:

Դաւիթն ասաց.

— Ինչ մօրից եղել եմ,

Մարդու բարեւ չեմ տուել.

Այսօր Համթօլին տեսել,

Վախից բարեւ եմ տուել:

Համթօլն ասաց.

— Քառասուն տարի դռնապանութիւն եմ արել,

Մարդու բարեւ չեմ առել,

Այսօր Դաւթին եմ տեսել,

Վախից բարեւ եմ առել:

Դաւիթն ասաց. — Օրհնեալ է Աստուած, թէ դու վախից իմ բարեւ տուար, ես էլ վախից քեզ բարեւ տուի: Եթէ դու իմ բարեւ չառնէիր, ցաւ պիտի դառնար, իմ սիրտն ընկնէր, ինձ սպանէր:

*
* *

Դաւթի ձին քչեցին, գոմը տարան. այդտեղ քառասուն ձի է կապած, քառասուն պահլաւանների ձի: Այդ քառասուն պահլաւանները՝ որը հինգ, որը եօթն, որը տասը տարի է, Խանդուղ-Խանումի պալատում ընկած, նրա

ձեռքն են խնդրում, Խանումը ոչ ոքի խօսք չի տալիս: Քուռկիկ-Ջալալին բոլոր ձիերին քացելով դուրս արաւ, ինքն ամենքի կերը կերաւ: Դաւիթն էլ գնաց, պահլաւանների մէջ նստեց: Բերին, հաց գցեցին: Դու մի ասիր, պահլաւանները Դաւթին նախանձում են: «Եօթը, տասը տարի է, մենք այստեղ ենք, խանումը մեզ նշան չտուաւ. հիմի Սթանու շաղկամակերը եկաւ, դեռ երեսն էլ չի տեսել, խնձոր զարկեց նրան»: Եւ մտքներումը դրել են, որ Դաւթին սպանեն: Թրերը գաղտնի կերպով սփռոցի տակն են դրել, յարմար ժամի են սպասում:

Եօթը տարուայ նռան գինի բերին, որ խմեն: Նրանց թասը գինու թաս չէ, տաշտից մեծ է: Մէկ լցրին, Դաւթին տուին, — խմեց: Մէկ էլ լցրին, տուին, Դաւիթն ասաց. «Եղբայր, այդպէս չի լինիլ, եկէ՛ք կարդով խմենք, ով կհարբի, թող պառկի, ով չէ՛ թող քէֆ անի»:

Բայց նրանք կարո՞ղ են Դաւթի հետ գինի խմել, եօթը տարուայ նռան գինի: Խմեցին, հարբեցին, թուլացած՝ տեղները պառկեցին:

Դաւիթն իւր ծառային կանչեց, ասաց. «Վեր կաց, հացը հաւաքիր, մեղք է, կոխ են տալիս»:

Ծառան վեր կացաւ, հաւաքեց:

Տեսան, ամեն պահլաւանի առաջ սփռոցի

տակը մերկացրած թուր է դրած: Դաւիթն ամենը ժողովեց, ծնգան տուաւ, այնպէս փշրեց, ինչպէս մարդ մի բուռը լուցկի կոտրտի: Ծառային տուաւ, ասաց. «Տար, մեր ձիու խուրջինի մէջ ածիր, լաւ պողպատ-երկաթ է, պայտ ու բևեռ կշինենք»:

Երբ մեր հարբած պահլաւանները ուշքի եկան, Դաւիթը թուրն առաւ, մէջ տեղ կանգնեց. «Ռուք պէտք է ինձ սպանէիր»:

Պահլաւանները սարսափեցին, մէկ մէկ դուրս փախան:

* * *

Ուրբաթ օրը Դաւիթը գնաց, Խանդուղի պալատի պարտէզի պատի տակ կանգնեց: Այդ օրը Խանումը քառասուն նաժիշտներով շրջապատուած՝ պարտէզ պիտի իջնէր, մարմար հաւուզում պիտի լողանար:

Երբ Խանդուղը նաժիշտների հետ եկաւ, Դաւիթը առաջ գնաց, հասաւ օրիորդին, գլրկեց և ուզում էր համբուրել: Օրիորդը չթողեց, այնպէս զարկեց Դաւթին, որ քիթն ու բերանը արլւն դարձաւ:

Ինքը պարտէզ մտաւ, մերկացաւ, որ լողանայ:

Դաւիթն է. հերսոտել, կրակ է կտրել: Հեծել է իւր ձին, Խանդուղի հօր քաղաքը պիտի աւերի:

Նաժիշտները եկան, տխուր լուրը Խանդուղ-Խանուամին յայտնեցին:

Օրիորդը շտապով շորերը հագաւ, Դաւիթի մօտ գնաց. նրան վեր առաւ, իւր սենեակը տարաւ, արիւնը լուացաւ. հաց կերան, Դաւիթի սիրտն առաւ:

*
* *

Համգայ պահլաւանը մարդու գիր ուղարկեց, Խանդուղի հօրն ասաց. — Թագաւոր, աղջիկդ ինձ պիտի տաս, պատրաստիր, ուղարկիր:

Թագաւորն էլ իւր վազիրներին կանչեց, Համգայ պահլաւանի թուղթը կարդաց, հարցրեց. — Ի՞նչ էք ասում:

Ասացին. «Թագաւոր, քո կամքն է. դու գիտես:

Թագաւորն ասաց. — Այդ զօրաւոր պահլաւանի դէմ ի՞նչ պիտի անենք. բերէք, օրիորդին հագցնենք, ուղարկենք:

Թագաւորի պատիկ տղան առաջ եկաւ, ասաց. «Թագաւոր, քո աղջիկը որ Համգայ պահլաւանին ես ուղարկում, Մհերի տղայ Դաւիթին

Ինչ պատասխան պիտի տաս:

Ասաց. — Ի՞նչ Մհերի տղայ Դաւիթ:

Գնացին, Դաւիթին կանչեցին, բերին:

Եկաւ, գլուխ տուաւ, Թագաւորի առաջ կանգնեց:

Թագաւորն ու վազիրները զարմացան, հիացան. — Այդպէս էլ տղամարդ կլինի:

Ու բերին, Համգայ պահլաւանի գիրը Դաւիթի առաջ կարդացին:

— Դաւիթ, լսեցիր:

«Լսեցի»:

— Կարո՞ղ ես գնալ, Համգայ պահլաւանի գլուխը բերել:

«Կգնամ, կբերեմ»:

Թէ նրան սպանեցիր, աղջիկս քոնն է, թէ սպանուեցիր, նրան կտանք:

Իսկ Խանդուղ խանումը լաց է լինում. նա շատ է փոշմանել, թէ ինչո՞ւ Դաւիթին խընձոր զարկեց և քառասուն պահլաւանների նախանձը շարժեց: Եթէ ինքը Դաւիթին նշան չըտար, քառասնից մէկը կգնար Համգայ պահլաւանի դէմ կռուելու, Դաւիթը կմնար:

*
* *

Դաւիթը ձին քաշեց, հեծաւ, գնաց, Խանդուղ Խանուամի առաջ կանգնեց, ասաց. — Խանդուղ-Խանուամ, ես գնում եմ. մեր կռիւր քառասուն օր է տեւում, թէ մինչև քառասուն օրը եկայ, եկայ. թէ չէ՝ ուրեմն սպանուած եմ. մարդու շորեր կհագնես, կգաս, դիակների միջից իմ դիակը կջոկես, թաղել կտաս»:

* * *

Դաւիթը քշեց ձին, գնաց, շատն ու քիչը Աստուած գիտէ, Համգայ պահլաւանի քաղաքն հասաւ: Հարցրեց, ցոյց տուին նրա պալատը: Ներս մտաւ: Պահլաւանը նստած էր աթոռի վրայ: Սարսափելի տեսք ունէր նա. ներքի մուկը գետնովը քարշ էր գալիս:

Դաւիթը բարեւ տուեց. նա բարեւ առաւ, հարցրեց.

«Ի՞նչ մարդ ես»:

Դաւիթն ասաց. — Խանդուղ Խանուամի մարդըն եմ:

«Ինչո՞ւ ես եկել:

— Եկել եմ, Խանդուղ-Խանուամի համար մի նշան տաս, տանեմ:

Համգայ պահլաւանն ճկոյթի մատանին հանեց, տուաւ, ասաց. «Ա՛ռ, տար»:

Դէն չառտեց Դաւիթը, ասաց. — Այդ ի՞նչ եմ անում:

«Հապա ի՞նչ ես ուզում, որ տամ, Խանդուղ-Խանուամի համար նշան տանես»:

Ասաց. — Քո գլուխն եմ ուզում, որ տանեմ, ուրիշ ոչինչ:

Համգայ պահլաւանը հերստտուեց. վեր թռաւ տեղից, Դաւիթի վրայ յարձակուեց: Դաւիթըն էլ առաջ գնաց, իրար բռնեցին: Ամբողջ օրը կռուեցին, իրար քաշքշեցին: Վերջապէս Դաւիթը նրան գետին գլորեց, շոգերը կրծքին զարկեց, թուրը հանեց, գլուխը կտրեց: Գլուխըն առաւ, ձիու թամբից կախեց, ինքն էլ հեծաւ ձին ու քշեց:

* * *

Քառասուն օրն անցաւ, Դաւիթը չեկաւ: Խանդուղ Խանումը կարծեց, թէ Դաւիթին սպանել են. մարդանակ շորեր հագաւ, զրահը կապեց, իւր ձին հեծաւ, ասաց.

— Գնամ, Դաւիթի դիակը ջոկեմ, բերեմ, թաղեմ:

Դաւիթը ճանապարհի կէսին տեսաւ՝ հեռուից մի ձիաւոր է գալիս, փոշին երկինք է բարձրացել:

Որ մօտեցան իրար, Դաւիթը նրան ճանաչեց, բայց նա Դաւթին չճանաչեց:

Բարև տուաւ Դաւիթը, ասաց.—Ո՛ւր ես գնում, ո՞ւմ ես ուզում:

«Գնում եմ Մհերի որդի Դաւթին գտնելու»:

—Նրան ես սպանեցի:

«Որ այդպէս է, եկ ես ու դու կռուենք:

Կռիւն սկսեցին, փոշի բարձրացաւ, դաշտը բռնեց, արևի երեսը ծածկեց: Ինչպէս եօթը գութան գցես, գետինը հերկես՝ այնպէս էր գետինը պատուում նրանց ձիերի ոտներին առջև:

Չատ կռուեցին, իրար չյաղթեցին, որովհետև Դաւիթը սրտով չէր խփում:

Ապա ձիերից իջան, գօտեմարտն սկսեցին:

Դաւիթը Խանդուղ-Խանումին գետին գրտրեց. նա ասաց.—Թէ Աստուած կսիրես. ինձ մի սպանիր, ես կնիկարմատ եմ:

Դաւիթն ասաց. «Ես գիտեմ, որ դու կնիկարմատ ես: Միտդ է, որ ինձ խփեցիր, քիթ ու բերանս արիւն արիր. այս էլ թող նրա փոխարէնը լինի:

Ուրախացաւ Խանդուղը, տեսաւ, որ դա իւր Դաւիթն է: Ձիերը հեծան և երկուսով կապուակող եկան:

Դաւիթը Համգայ պահլաւանի գլուխը տա-

րաւ, թագաւորի առջև դրեց: Ուրախացաւ թագաւորը, իւր աղջիկը Դաւթին տուաւ. եօթըն օր, եօթը գիշեր հարսանիք արին:

* * *

Կազմեցին, պատրաստեցին, ուղտեր բարձեցին. Դաւիթն ու Խանդուղ-Խանումը Սասուն են գնում: Քառասուն պահլաւանները եկան, Դաւթի ձեռն ու ոտը համբուրեցին, ասացին. «Խանդուղ-Խաթունը հալալ լինի քեզ»: Եւ դրանք էլ Դաւթի յետևից ընկան, գնացին:

Եկան Ծծմակայքին մօտեցան. Բանայ խանումը Դաւթի առաջը կտրեց. ասաց.

—Դաւիթ, դու իմ հօր գութանի հացը կերար, իմ երեսն էլ չուղեցիր տեսնել. գնացիր, Խանդուղ-Խանումին կին առար: Այժմ պիտի գաս, ինձ հետ կռիւ անես, թէ չէ՝ չեմ թողնիլ, որ գնաս:

Ասաց. «Այժմ հետս կնիկարմատ կայ. թող տանեմ Սասուն թողնեմ, եօթն օր էլ մնամ, ութերորդ օրը կգամ, կռիւ կանենք»:

—Երդուիր, որ կգաս:

Դաւիթն երդուեց. «Վկայ է Մարութայ բարձր Աստուարածին, խաչ պատրազին, որ իմ աջ թիկին»:

Ապա Սասունն եկան, եօթն օր, եօթը գիշեր էլ այտեղ հարսանիք արին. կերան, խմեցին, մեծ ու պստիկ ուրախացան:

Դաւիթը Բանայ խանութին տուած երգումը մոռացաւ:

Մի օր Դաւիթը կնոջն ասաց. «Խանդուղ-Խանում, մեղք են այս պահլաւանները. հինգ-տասը տարի քո յուսով են մնացել, այժմ էլ մեզ ճանապարհելով՝ այստեղ են եկել: Երգուել եմ, որ սրանց Գիւրջիստան տանեմ, քառասուն աղջիկ ընտրեմ, դրանց հետ պսակեմ:

Խանդուղ-խաթունն ասաց.— Այ մարդ, դու իմ մեղքի տակ մտար, մօրից, հօրից ինձ հանեցիր, այստեղ բերիր. հիմի էլ ինձ թողնում ես, գնում. եթէ քեզ տղայ լինի, աղջիկ լինի ի՞նչպէս պահեմ:

Դաւիթը հանեց, մի ոսկի ապարանջան տուաւ՝ ոսկին անգին քարերի մէջ չէր երևում:

Ասաց՝ թէ որ տղայ եղաւ, աջ թևին կկապես, թէ աղջիկ եղաւ, կծախես, իրան կտաս, նրա տղի տղան էլ ուտի՝ չի վերջանալ:

*
* *

Դաւիթն ու քառասուն պահլաւան ձիերը հեծան, գէպի Գիւրջիստան գնացին: Հատն ու

քիչը Աստուածը գիտէ, հասան մի տեղ, որից չորս ճանապարհ են գնում: Տեսան՝ մի ալևոր ծերունի այնտեղ նստած. բարև տուին, բարևն առաւ: Ծերունին հարցրեց.

— Ո՞րդիք, մըր էք գնում:

Պատասխանեցին. «Գիւրջիստան»:

Ասաց.— Ինչո՞ւ էք գնում:

«Աղջիկ ուզելու»:

— Թէ լաւ աղջիկ էք ուզում, Ատրբէյջան գնացէք:

Եւ ցոյց տուաւ Դաւիթին Ատրբէյջանի ճանապարհը:

Դաւիթն ու պահլաւանները գէպի Ատրբէյջան գնացին, Ատրբէյջանի քաղաքը հասան: Քաղաքի մօտ քառասուն աղջիկ տեսան, մէկը մարդանակ էր հագնուած:

Բարև տուին, բարև առին:

Այն մէկը, որ մարդու շորեր էր հագած, Դաւիթին դարձաւ, հարցրեց.

— Ի՞նչ մարդ էք, դրանք քո ի՞նչն են:

«Այդ քառասունն էլ իմ եղբայրներն են: Ժսկ այդ աղջկե՞րը քո ինչն են:

— Բոլորն էլ քոյրերս են:

«Գնա քո քոյրերն իմ եղբայրներին տաս:

— Ես կտամ, թէ կարող էք, տարէք:

Ասաց. «Կտանենք, Աստուծով կտանենք:

— Աստուած ի՞նչ է:

«Աստուած նա է, որ մեզ ստեղծել և պահում է:

— Դուք մեր կուռքերը չէ՞ք պաշտում:

«2է, մենք Աստուած ենք պաշտում:

— Եթէ դուք իմ քոյրերին տանէք, մեր կուռքերը կգան, կկռուեն, ձեր ձեռքից կխլեն:

«Թող գան, ասաց Դաւիթը:

Եւ քառասուն աղջիկն առաւ, պահաւաններն հետ Ատրբէյջանից յետ դարձաւ:

Իսկ նա՝ որ մարդանակ էր հագնուած, նրանց ճանապարհեց, յետոյ ինքը քաղաք եկաւ, կռատուն մտաւ. կանչեց կուռքերին, ասաց.

— Օտար մարդիկ եկան, մեր աղջիկներին փախցրին, տարան:

Կռատնից ձայն բարձրացաւ, գոռում, գոչին, աղաղակ. «Օտար մարդիկ եկան, մեր աղջիկներին փախցրին, տարան»:

Ամբողջ քաղաքը ոտքի կանգնեց. զէնք ու զրահ կապեցին, ձիաւորուեցան, թրեր քաշեցին, Դաւիթի ետեւից ընկան:

*
* *

Դաւիթը, պահաւաններն ու աղջիկները աւելոր ծերունուն հասան: Նստեցին, կերան, խը-

մեցին, ուրախութիւն արին:

Յետոյ Դաւիթը ամեն մի պահաւանի մի աղջիկ տուաւ և մի առանձին երկիր, ամենքն էլ ուրախացած իրանց տեղերը գնացին:

Դաւիթը մենակ մնաց: Մէկ էլ տեսաւ, որ Ատրբէյջանի քաղաքի մեծն ու պատիկը զինուած, ձիաւորուած իւր չորս կողմը պատեցին:

Դաւիթն էր, ձի հեծաւ, թուրը քաշեց և նրանց մէջ ընկաւ. որին սպանեց, որին փախցրեց, ոչինչ չթողեց: Այդպէս կոտորելով էլի Ատրբէյջանի քաղաքը հասաւ: Ման եկաւ այդ տեղ, մի աղջիկ տեսաւ: Մի աղջիկ, այնքան սիրուն, գեղեցիկ, որի նմանը Դաւիթը չէր տեսած: Դու մի ասիլ՝ այդ աղջիկը թագաւորի աղջիկն է. հէնց դա էր, որ մարդանակ հագուած իւր քառասուն նաժիշտների հետ Դաւիթին պատահեց և նաժիշտներին էլ նրա հետ ճանապարհեց:

Դաւիթն այդ աղջկանն էլ վերցրեց, ձիու գաւալն առաւ, քշեց դէպի Սասուն:

*
* *

Դաւիթն մի տղայ էր եղել, անունը Մհեր էին դրել: Ուրիշը տարով է մեծանում, նա օրով մեծացաւ, ուրիշը ամսով՝ նա ժամով: Վեց

տարեկան էր Մհերը. մի օր ձի հեծաւ, դուրս եկաւ քաղաքից դըօսնելու: Տեսաւ մի ձիաւոր է գալիս՝ գաւազին մի սիրուն աղջիկ. կանչեց Մհերը, ասաց. — Այդ աղջկանը ուր ես տանում, այ ծերունի:

Դաւիթը, որ վախ ասած բանը չգիտէր, վախեցաւ: Ասաց.

Չատ ծովեր եմ մտել,

Ձիուս ոտը չի թրջուել.

Սար ու ժայռեր եմ ման եկել,

Դիմացս մարդ չի կանգնել.

Փոքրիկ տղայ եմ տեսել,

Հեռուից եմ վախեցել.

Սարե՛ր, ձորե՛ր, օգնեցէք,

Այս տղայից ինձ փրկեցէք:

Ասաց, բայց և ձին քշեց, դէպի մանուկ ձիաւորը գնաց. նա էլ ձին քշեց, Դաւիթի վրան յարձակուեց: Իրար հետ բռնուեցին. կռիւն սկսուեցաւ, մի սարսափելի կռիւ: Փոշու ամպ բարձրացաւ, երկնքի երեսը բռնեց:

Դաւիթի թաշկինակն ընկաւ. քամին առաւ, տարաւ, Խանդուղ-խանումի դռան առաջ վէր գցեց:

Խանդուղ-խաթունը դուրս եկաւ, նայեց՝ փոշին աշխարհս բռնել է: Յած նայեց, թաշկինակը տեսաւ. ճանաչեց. վեր խռաւ, նայեց,

ըթին ու բերանին տարաւ, ասաց. «Դաւիթի թաշկինակն է:

Իսկ փոշին աւելի բարձրանում է, դաշտը դղրդում է, Մհերն էլ տանը չէ:

Խանդուղ-խաթունը ելաւ, ձին հեծաւ, քշեց, գնաց, տեսաւ որ Դաւիթն է ու Մհերը, իրար բռնել, կռուում են. ինչպէս երկու սար գնան, գան, իրար դիպչեն, այնպէս են Դաւիթըն ու Մհերը իրար առել:

Խանդուղ-խաթունը կանչեց՝ ասաց.

«Սարե՛ր, ձորե՛ր ստեղծող Աստուած,

Դու հայր ու տղայ իրարուց ջոկես:

Որ ասեց, երկուսն էլ ձիերից իջան. իրար հասան, գօտեմարտն սկսեցին:

Մհերը Դաւիթին վերցրեց, գետին զարկեց. Դաւիթը կէսով հողի մէջ խրուեց: Մհերը դանակ հանեց, Դաւիթի վիզը պիտի կտրէր:

Դաւիթը լաց եղաւ, ասաց. «Ա՛յ տղայ, դու որ ինձ սպանում ես, իմ կտրճի ձեռքից ինչպէս պիտի ազատուիս:

Ասաց. — Քո կտրիճն ո՞վ է:

Ասաց. «Իմ կտրիճն այն է, որ ոսկի ապարանջան ունի թևին կապած:

Տղան նայեց իւր թևին, տեսաւ՝ ոսկի ապարանջան կայ իւր թևին կապած, լաց եղաւ, Դաւիթի ձեռքն ու գլուխը համբուրեց, ասաց. «Դու

իմ հայրն ես, մեղայ»:

Հայրն ասաց. — Ո՛րդի, անմահ լինիս, անժառանգ:

Աստուած լսեց, կատարեց. Մհերը մնաց անմահ, անժառանգ:

Դարձան, իրանց տուն գնացին: Դաւիթը Ատրբէյջանի թագաւորի աղջկանը Մհերին տուաւ, պսակեց. եօթն օր, եօթը գիշեր հարսանիք արին, կերան, խմեցին, ուրախացան:

Մհերն իւր կնոջն առաւ, Ատրբէյջանի քաղաքը գնաց, եղաւ այնտեղի թագաւոր:

* *

Մնացին Դաւիթն ու Խանդուղ-խանումը: Դաւիթն ասաց. «Կնիկ, տղայիս պսակեցի, թագաւոր ուղարկեցի Ատրբէյջան, էլ թըշնամի չմնաց, ամենքին իմ թուրը կտրեց. տեղ չմնաց, ոտի տակ տուի. վեր կաց, մի սղինձ ջուր տաքացրո՛ւ, ինձ լողացրո՛ւ:

Դաւիթը շորերը հանեց, որ լողանայ: Կինը նայեց, տեսաւ, որ թևի վրայի խաչը սևացել է:

Դժուարացաւ կնիկը, լաց եղաւ:

Դաւիթն ասաց. — Կնիկ, ի՛նչ է պատահել: Ասաց. «Թևիդ խաչը սևացել է:

— Այս ի՛նչ եմ արել, կնիկ, ես երդմնաւոր եմ եղել. երդուեցի, Բանայ խանումին խօսք տուի, թէ եօթը օրից կգամ, եօթն օրը եօթը տարի դարձաւ. կնիկ, ես գնացի:

Իսկոյն վեր կացաւ, Քուռկիկ Ջալալին հեծաւ, թուր կայծակին կապեց, գնաց, Բանայ խանումին հասաւ:

Բանայ խանումն ասաց. «Դաւիթ, դու երդուեցիր եօթն օր, մնացիր եօթը տարի. ես էլ քեզ սպասելով մարդու չգնացի»:

Ասաց. — պատրաստուիր, կռուենք:

Ասաց. «Մի ժամ ժամանակ տուր, շորերս հագնեմ, զրահս կապեմ, գամ»:

Դաւիթը ձին կապեց, գետի ափն իջաւ, շորերը հանեց, լողացաւ:

Բանայ խանումն իւր հօր գութանի խոփը՝ քառասուն լիտր պողպատ, հնոցի մէջ գրեցեց, կարմրացրեց: Դաւիթը ջրից դուրս եկաւ, շորերը հագաւ, գետի ափին նստեց, Բանայ խանումին է սպասում: Իսկ խանումը կարմրած խոփն առաւ և կամրջից այնպէս զարկեց, որ Դաւիթը տեղը մնաց:

Դաւիթը մեռաւ. ձին կապը կտրեց, դուրս թռաւ. որքան հովիւ, նախրորդ, ձի, տաւար պատահեցին, բոլորին կոտորեց. Սասուն հասաւ, Խանդուղ-խանումի դռան առաջ կանգնեց:

Խանդուղը տեսաւ, ձին եկել է, տէրը չը-
կայ. հասկացաւ, որ Դաւթին սպանել են. Ձե-
նով-Յովանին յայտնեց:

*
* *

Եօթը գոմշի կաշի բերին, արևի տակ չո-
րացրին, Յովանին մէջը փաթաթեցին որ գո-
ռալիս չպատռուի: Ձենով-Յովանը վեր կացաւ,
կանչեց. ձայնը գնաց, Ատրբէյջան հասաւ, Մը-
հերի ականջն ընկաւ:

Ձենով-Յովանն ու Մհերը հասան. Դաւթի
մարմինը գտան: Բանայ խանումի հօր երկիրը
աւերեցին. Բանայ խանումին Քուռկիկ-Ջալալի
պոչից կապեցին: Ձին սարերն ու ձորերն ըն-
կաւ, Բանայ խանումի մեծ կտորն ականջը
մ'նաց:

Ապա Դաւթի մարմինը ձիու վրայ բարձե-
ցին, Սասուն բերին. այնտեղ թաղեցին:

Խանդուղ-խաթունը Դաւթի մահուան կըս-
կիծը չկարողացաւ տանել, նա էլ շուտով մե-
ռաւ:

Վ Ե Ր Ջ.



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

12. Յ. Հաղարթեղիան—Սասունցի Դաւիթ դիւ-
ցազն , — 20

Գ Տ Ն Ի Ո Ի Մ Ե Ն Ի Պ Ա Յ Ե Ս Տ.

13. Վիճելիւմ—Թէլ—կամ Հելուետիայի աղա-
տութիւնը—բանաստեղծական յո-
րինուած Ֆլօրիանի. Թարգմ. դադ.
լեզուից (սակաւաթիւ) — 40
14. Օլիվեր—Գօլգամիթ—վէքֆիլդի երէց, ֆը-
րանսիականից Թարգմ. Մ Բու-
դաղեանց (սակաւաթիւ) 1 —
15. Բաֆֆի—Պարոյր Հայկազն (Պրոյերեսիոս) — 20
16. — Ո՛վ էր մեղաւոր — 20
17. Հոֆման, Ֆրանց—Հաւատարմութիւնը ա-
մեն արգելքներին յաղթում է,
Թարգմ. Յար. Առաքելեանցի . — 40
19. Հոֆման Ֆրանց—Խաւարից դէպի լոյս,
Թարգմ. Յար. Առաքելեանցի . — 40
18. Լէսսինգ—Նաթան իմաստուն—գրամատի-
կական բանաստեղծութիւն, 5 գոր-
ծողութեամբ Թարգմ. Գ. Բարխու-
դարեանց — 60
20. Շիլլեր—Վիլհէլմ Տէլլ—գրամա 5 գործո-
ղութեամբ, Թարգմ. Գէորգ. բար-
խուդարեանց 1 —
21. Շիլլեր—Դօն Կարլոս. գրամական բա-
նաստեղծութիւն, 5 գործո. Թարգմ
Գ. Բարխուդարեանց 1 —
22. Շիլլեր—Օրլեանի կոյսը, վիպասանական

«ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻ»

Ձաք, Գրիգորեանցի հրատարակութիւնները՝

Ռ. Կ.

1. Ա. Մ. Ե. Պ.—Գիւցաղունք ըստ Խորենացւոյ՝ Հայկ, Արամ, Վահագն. պատկերներ պատմական կեանքից . — 30
2. Պօլսիմպերիս (մանկական թատրոն) կատակերգութիւն 2 արարուածով, թարգմ. Յով. Նազարեանց . . — 20
3. Գամառ—Բաթիսան—մանկական ոտանաւորներ և երգեր. — 20
4. Նզնիկ—քնյ. Նրզնկեանց—մանկական երգեր և պար-երգեր — 20
5. Նզնիկ քհնյ Նրզնկեանց —Չայնազրեալ մանկական երգարան՝ երգեր և պար երգեր 'ի հրահանգ և 'ի պէտս հոգևոր դպրոցաց հայոց — 40
6. Նզնիկ քնյ Նրզնկեանց Չայնազրեալ ազգային երգարան հայ դպրոցներէ համար — 80
7. Մերենց Ներկունք Թ. դարու 1 —
8. — Թէոդորոս Ռշտունի 1 —
9. — Թորոս Լևոնի 1 —
10. Գրիգորեանց. Ձաք—ջուր—տարրական նախագիտելիք բնական գիտութեան, 11 պատկերներով . . . — 35
11. — Մարգարակազմութիւն — տարրական դասեր, 18 պատկերներով դպրոցներէ համար — 50

2013

12834

